№ 54 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 11 **1896** ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 11 № 54

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառի 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Այրի տիկին Մարիամ Դաւթեան և Յովհաննէս Իսահակեան Ծովիանեանցները յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ կիրակի, մայիսի 12-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում կը կատարվի հանդուցեալ

ԻՍԱՀԱԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԾՈՎԻԱՆԵԱՆՑԻ

մահվան քառասունքի կարգը: Հոգեհանդիսաը կը սկսվի ժամը $11^1/_2$-ին: 1—1

Կատարինէ Մելիք-Ղարագեօզեանը իր որդոց հետ պատիւ ունի յայտնել իր բարեկամներին և ծանօթներին, որ վաղը, մայիսի 12-ին, Տափի Թաղի ս. Գէորգ եկեղեցում, պատարագից յետոյ, իր հանդուցեալ ամուսնու

ՊՕՂՈՍ ՄԷԼԻՔ—ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

մահվան տարեդարձի առիթով, կը կատարվի հոգեհանդիսա: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մակեդոնական ըէֆօրմների ծրագիր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թագադրութեան տօնախմբութիւնը Թիֆլիսում. Օրէցօր. Բագուի կէրօսինագործների դաշնակցութեան ընդհանուր ժողովը. Նիժեգօրոդեան ցուցահանդէսն այցելողների համար սահմանած երկաթուղային տարիքը. Մատենագրութիւն. Նամակ Մօսկվայից. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Թիւրքիայից. Մահմէտականների կոնդրէս.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Շվէյցարիայից.

ՄԱԿԵԴՕՆԱԿԱՆ ԸԷՖՕՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

—

Սուլթանը ստորագրեց և հաստատեց Ռումելիայում և Մակեդոնիայում մացնվելի ըէֆօրմների ծրագիրը, բայց թէ երբ կիրագործվեն այդ ըէֆօրմները, այդ միայն Ալլահին է յայտնի:

Նոր ծրագրի համաձայն, Ադրիանուպօլսի կամ Էդիրնէյի վիլայէթը վարչական կողմից միացնվում է Մակեդոնիայի հետ: Այդ վիլայէթը նշանաւոր է նրանով, որ բազմաթիւ բոլգարական եկեղեցական ծխական համայնքներ է պարունակում իր մէջ, որոնք ենթարկվում են բոլգարական էկզարխի իրաւասութեան: Եւ որովհետև նոր ծրագրով թէ այդ վիլայէթի և թէ Մակեդոնիայի միւս վիլայէթների, այն է Սօլունի, Մոնաստիրի և Կոսսօվայի մէջ խորհրդականների կէսը պէտք է ընտրվեն քրիստոնեաներից, ուստի, շատ պարզ է, որ բոլգարական ազդեցութիւնը մեծ ծաւալ պէտք է ստանայ:

Ծրագրի միւս էական կէտերը վերաբերում են բոլգարական եկեղեցիներ շինելու թոյլատրութեան, ժանդարմերիայի կազմակերպութեան և հարկերի հաւաքման: Մինչև այժմ մի նոր եկեղեցի շինելու համար ամբողջ 4—5 տարի պէտք էր աշխատել, այն էլ շատ անգամ անապող. այժմ, նոր ծրագրով, նոր թոյլատրութիւն ստանալու համար որոշված է ամենաուշը 3 ամիս ժամանակամիջոց: Ժանդարմերիայի մէջ պէտք է ծառայեն և քրիստոնեաները, որոնք սակայն ընդհանուր թիւ 10 տոկոսից աւելի չը պէտք է կազմեն: Հարկերի և տուրքերի հաւաքման սիստեմը միանգամայն վերանորոգվում է, իսկ աւազակութիւնները վերացնելու համար որոշված է մի միջոց, որ գործադրվում է ասիական մի քանի երկրներում: Ծրագրի մէջ ասված է, որ եթէ մի գիւղում կամ համայնքում յայտնվում են աւազակներ, պատասխանատու են նրա բնակիչները:

Տարակոյս չը կայ, որ այդ ծրագիրը, որը գոհացում է տալիս միայն բոլգարական պահանջներին, ի ՇՆաս սերբական պահանջների, մեծ դժգոհութիւն և տրտունջ պէտք է յարուցանի Սերբիայում և սերբ-բոլգարական յարաբերութիւնները սաստիկ պէտք է լարվին: Բայց չը նայելով այդ բոլորին, մակեդոնական հարցը համարվում է, գոնէ մի քանի ժամանակի համար, լուծված:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Կովկասի կառավարչապետի պաշտօնակատար կոմս Տատիշչէվի հաւանութեամբ հաստատվել է Նոցա Կայսերական Մեծութիւնների սրբազան թագադրութեան առիթով Թիֆլիսում լինելի տօնախմբութիւնների ծրագիրը:

Թագադրութեան նախընթաց օրը, այն է երկուշաբթի, մայիսի 13-ին, բոլոր եկեղեցիներում հսկում պէտք է կատարվի:

Առաջին օրը, մայիսի 14-ին, թագադրութեան օրը, բոլոր եկեղեցիներում պէտք է պատարագ մատուցվի: Սիօնի մայր եկեղեցում պատարագ կը մատուցանի Աղեքսանդր եպիսկոպոսը, որից յետոյ ամբողջ զէնէրալիտէտը կը դուրս գալի, սալասելով գոհացողական մաղթանքին: Հէնց որ Թիֆլիսի նահանգապետը հեռադիր կը ստանայ ներքին գործերի մինիստրից Նոցա Կայսերական Մեծութիւնների սրբազան թագադրութեան մասին, Արսէնալի սարից երեք անգամ թնդանօթը կարձակվի և դրանից յետոյ քաղաքի բնակիչները կարող են զարդարել իրանց տները դրօշակներով: Այդ ժամանակ և միանգամ ևս գալիս է հաստատելու այն կլասիկական ճշմարտութիւնը, թէ՝ բռնակալութիւնը տեղական չէ: Քանի տարի շարունակ Իտալիան տնքում էր այդ հրէշի տիրապետութեան տակ, քանի անգամ նա հէնց ինքն էր պատրաստել իր անկումը, ինքն էր իր ձեռքով փորել իր գերեզմանը, սակայն միշտ նորից հաստատվել է իր տեղը, միշտ հանգամանքները նպաստաւոր են եղել:

Ճնշել ամեն մի ազատ միտք, ճնշել ամեն մի ազատամիտ հաստատութիւն, ամեն մի առողջ շարժում, կաշկանդել մամուլը, օրինաւոր կամ ապօրինի միջոցներով խեղդել ժողովրդի ձայնը, հարիւրաւոր անմեղ զոհերով լցնել քանտերն ու աքսորավայրերը,—այդ մարդու վերջին տարիների գործունէութիւնը սոսկալի բռնութիւնների մի անվերջանալի շարիք է ներկայացնում:

Մենք չեշտում ենք նրա վերջին տարիների գործունէութեան վրա, որովհետև Կրիսպի առաջներում այն չէր, ինչ որ այսօր է: Սկզբներում, չը զարմանաք ընթերցող, նա ևս յեղափոխական էր, և այն էլ ամենակարմիր տէրրորիստներից: Չը զարմանաք, ասում ենք, որովհետև այդ մետամորֆոզը այսօր, դժբաղդաբար, ընդհանուր երևոյթ է: Դաւանել ամենալայն, ամենաազատամիտ և արմատական սկզբունքներ կեանքի առաջին բոպէներում, և ապա անցնել ծայրայեղ յետադէմների շարքը՝ կեանքի վերջին պերիօդում,—դա եզակի երևոյթ չէ, այլ մի տխուր փաստ, որ ամեն մի ազգի պատմութեան մէջ տեղի է ունենում:

Ո՞վ էր Կրիսպի: Նա 50-ական և 60-ական թուականների նշանաւոր յեղափոխական հերոսներից է, ընկեր և զինակից Մաձինիի, հռչակաւոր Գարիբալդիի,—մարդիկ, որոնց անունից անգամ սոսկում էին տիրանները: Նա կռուում էր այդ արմատական յեղափոխականների շարքերում, յանուն Իտալիայի, իր սիրած հայրենիքի ազատութեան, բայց նրա հռչակը աւելի հեռու է տարածվում: Երբ փետրվարեան յեղափոխութեան ալիքները հասան մինչև Իտալիա և երբ Սիցիլիա կղզու վրա պայթեց ապստամբութիւնը, դեռ այն ժամանակ (1848 թ.) Ֆրանչեսկո Կրիսպին, 20 տարեկան երիտասարդ, քաջաբար կռուում էր ապստամբների շարքում: Իր յեղափոխական գործունէութեան ընթացքում նա մի քանի անգամ աքսորվել է իր հայրենիքից իբրև թունդ արմատական և իբրև ծայրայեղ ամէնիստ: Այժմ տեսէք պատմութեան չարամիտ խաղը: Նախկին ամէնիստը այսօր դարձել է բարեպաշտ ու կրօնասէր, նախկին արմատականը դարձել է յետադիմութեան պարագլուխ: Քառասուն տարի առաջ յանուն ազատութեան և հաւասարութեան մարտնչող հերոսը, տէրրորիստական գործողութիւններով ընդդէմ բռնակալութեան պատերազմողը, այսօր նա ինքն է պատերազմ հրատարակել երբեմն երազած ու փայփայած կարգերի դէմ:

Ցիսալպական թուականների Նապոլի հասարակ փաստաբան Կրիսպին ոգևորութեամբ «կեցցէ ազատութիւն» էր գոչում, ազատութիւն մամուլի, խօսքի, գումարումների, իսկ 90-ական թուականների մինիստր—նախագահ Կրիսպին այդ բոլոր «ազատութիւնները» վնասակար ու վտանգաւոր համարելով, անողոք արշաւանք է սկսել նրանց դէմ. «կեցցէ բէակցիան, անկցին յեղափոխականները և յեղափոխութիւնները»:

Կրիսպիի վերջին պերիօդի գործունէութիւնը բնորոշելու համար բաւական է յիշել 1894 թուականի ամուր անցքերը: Անշուշտ դա ամենածանր տարիներից էր իտալական ժողովրդի կեանքում: Յիշենք «անարխիստական օրէնքները», որոնք հանդէս էին եկել Կարնօի սպանութիւնից յետոյ:

Եւրոպական պետութիւնների մէջ Իտալիան ամենից խիստ տուժեց այդ բացառիկ օրէնքներից: Ամենակարող Կրիսպին մի դեղեցիկ օր յայտարարեց իր վսեմութեան բարձրութիւնից, որ բոլոր բանտարկեալներ և այլ ժողովները (ի հարկէ ոչ-կաթոլիկ քահանաների) փակվեն, բոլոր շատ թէ քիչ աչքի ընկնող ագիտատորները ձերբակալվեն կամ աքսորվեն: Պէտք էր տեսնել, թէ ինչ իրարանցում էր տիրում այն ժամանակ ամբողջ Իտալիայում: Միացան բոլոր այն կուսակցութիւնները, որոնք մինչև այդ օրը կատաղի կռիւ էին մղում միմեանց դէմ. բայց կրիտիկան էր: Կրիսպիի ատոմենտատը ուղղված էր սահմանադրութեան էական սկզբունքների դէմ, վտանգված էին տասնեակ տարիներից ի վեր վայելած իրաւունքները, ազատ մամուլը, խօսքը, հաւաքումների ազատութիւնը, էլ ինչ էր մնում:

Օպոզիցիան կազմված սոցիալիստ կուսակցութեան չէֆերից, բաղիկալներից և հանրապետական ներկայացուցիչներից, բողոքեց, որքան կարողացաւ, մամուլի միջոցով, հրապարակական ցոյցերով, բայց անզօր մնացին այդ բոլոր ցոյցերը,—իտալական Բիսմարկը անողոք էր: Նրա հրահանգները ի կատար ածվեցին, բէակցիան այստեղ ևս յաղթանակեց, բայց աւելի խիստ, աւելի անդթաբար հարուածելով իր հակառակորդին:

Ֆրանչեսկո Կրիսպին դերազանցեց Բիսմարկին, վաստակեց նրա հռչակը, բայց դա Հերոստրատի տխուր հռչակն էր:

Սարսափած Սիցիլիայի ժողովուրդը, վերջին ծայր թշուառութեան հասնելով, կրկին անգամ փորձ էր արել ապստամբելու, և այդ կղզու հռչակաւոր հերոս—մարտիրոսները՝ Դէֆելիչէ, Բարբատո, Բոսկո և հարիւրաւոր ուրիշ մարդիկ, որոնք բողոքում էին և պահանջում էին այդ ժողովրդի համար գոյութեան իրաւունք, մարդավայել կացութիւն, Կրիսպին փակել տուեց նրանց միութիւնները, ժողովները և նրանց չէֆե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՅԻՑ

—

Ժընէվ, ապրիլի 10/22-ին

Ապենինեան թերակղզու ամբողջ տարածութեամբ վերջին օրերը մի արտասովոր քամի է փչում: Ցիրում է անսահման ոգևորութիւն, լավում են և ցնծութեան աղաղակներ, և բողոքի ու անէծքի չանթեր: Աղուայի ճակատամարտը և սուգ բերեց Իտալիային և պայծառ ու ազատ օրեր: Անպատիւ եղաւ իտալական դրօշակը,—ճիշդ է, և հազարաւոր անմեղ երիտասարդներ ապարդիւն կորան Հաբէշստանի խորքերում...

Սակայն, նայեցէք մեդալի միւս կողմը,—Իտալիան ազատվեց իր խարազանից, նա, որ տարիներ շարունակ սպանդանոց էր դարձրել այդ դժբաղդ երկիրը,—Կրիսպին՝ ընկաւ: Երէկվայ բռնակալը այսօր այլ ևս հեռացրված է ասպարէզից, և խոստանում է երբէք չը խառնվել քաղաքական գործերի մէջ: Նա, որ քիչ առաջ, իբրև առաջին պետական մարդ, բռնել էր իր ձեռքում Իտալիայի ղեկը, և մի ամբողջ ժողովրդի քաղաքական ու հասարակական իրաւունքները դարձրել էր իր կամայականութիւնների, իր անձնական կապրիզների առարկայ, նա, որ կառավարութեան կամքը՝ բարձրագոյն օրէնք հրատարակելով, թքել էր միանգամայն պարլամէնտի, սահմանադրութեան վրա,—Կրիսպին՝ բիսմարկեան բռնակալութեան այդ զզուելի ներկայացուցիչը, ընկճվելով ամբոխի բարձրագոչ բողոքի առաջ, հեռացաւ ընդ միշտ իր պաշտօնից,—ամօթաբար աչնչացաւ:

Դա մի հանդիսաւոր անկում էր, որի մասին շատ գրեցին ու ճառեցին Եւրոպայում և որը

կը սկսի Սիոնում գոհացողական մաղթանքը։ Երեկոյեան քաղաքում լուսաւորութիւն և հրաւառութիւն կը լինի։ Քաղաքային վարչութիւնը կը լուսաւորի քաղաքային տունը, Գօլովինսկի պրոսպեկտը, Ալեքսանդրեան այգին, որ բաց կը լինի հասարակութեան համար և որտեղ երաժշտութիւնը կածի տօնախմբութեան ամբողջ երեք օրը։ Մնացած տեղերը տանտէրերը և մասնաւոր անձինք կը լուսաւորեն։

Երկրորդ օրը, մայիսի 15-ին։ Առաւօտեան ժամը 10-ին, իւնկէրների դպրոցի հրապարակի վրա կը կատարվի գոհացողական մաղթանք և ժամը 12-ին, Ալեքսանդրեան այգում երեք հազար հոգու ճաշ կը տրվի Կայսերական պալատի մինիստրութեան հաշուով։ Երեկոյեան քաղաքում նորից լուսաւորութիւն կը լինի և Ալեքսանդրեան այգում երաժշտութիւն։

Երրորդ օրը, մայիսի 16-ին։ Իւնկէրների դպրոցի հրապարակի վրա կը հաւաքվեն քաղաքի բոլոր ուսումնարանների սաները և այդտեղ կը կատարվի գոհացողական մաղթանք։ Մաղթանքների ժամանակ բոլոր մագաղինները և խանութները կը փակվեն, իսկ յետոյ առևտրականներին կը թոյլատրվի բանալ իրանց խանութները և մագաղինները։

Ամբողջ երեք օրն էլ բոլոր եկեղեցիների զանգակները կը հնչեն։ Քաղաքի հաշուով կը հիւրասիրվեն զինուորները և քաղաքային դպրոցների աշակերտները։

ՕՐԷՑՕՐ
XXIV

Վրաց ինտելիգէնցիան մեզ ուղում է հաւատացնել, որ կալուածական բանկի ժողովների աղմուկը, կռիւը, փոխադարձ սպառնալիքը և շվմոցը՝ մի խորհրդաւոր կուսակցական պայքար է, ազգային—կուլտուրական մի իմաստուն կռիւ։ Մեզ ուղում են համոզել, որ Ճավճավաձէ և Մաչաբէլի ոչ թէ երկու «բանկային գործոներ» են, որոնցից իւրաքանչիւրն ուղում է միւսին սլլացնել, և միահեծան թագաւորել բանկի վրա, այլ երկու անձնուէր, գաղափարական գործոներ, որոնց մանր կրքերի, հայհոյանքի և անզուսպ ինտրիգների մէջ անգամ թաղնված է որ և է համազգային ձգտում, որ և է կուլտուրական գաղտնիք, որ և է վիրկարար միջոց... Եւ ահա, հիմնված այդ մոլորութեան վրա, Ճավճավաձէի կողմնակիցները իրանց ազգային պարքն են համարում սուլել, հայհոյել Մաչաբէլիին, կամ նրա կողմնակիցներին, երբ նա համարձակվում է ասել, թէ վերև երկինք կայ, իսկ Մաչաբէլիի պաշտպանները, վրաց ազգի պատի պաշտպանութիւն են համարում չվվացնել իշխան Ճավճավաձէին, երբ նա մինչև անգամ ասի, թէ երկու անգամ երկու չորս է...

Բանկային ժողովները այժմ արդէն սառն, լոգիական քննադատութեան ասպարէզ չէ, այլ ջղերը քայքայելու, երեակայութիւն զրգռելու մի ասպարէզ, ուր մարդիկ գալիս են հիւանդ ջղերով և դուրս գնում բոլորովին քայքայված, հիւանդոտ զրուցեան հասած ներվերով, անընդունակ՝ մարդը զանազանելու սատանայից, սուտը ճշմարտից, կամիկականը ողբերգականից...

Ծանր է, ճշմարիտ, տեսնել, թէ ինչպէս մի այնպիսի խելօք անձնաւորութիւն, մի այնպիսի հրապարակախօս և տաղանդաւոր բանաստեղծ, ինչպիսին է իշխան Ճավճավաձէ, թողած գրիչը, թողած հասարակական գաղափարական գործունէութեան ասպարէզը, դաւաճանելով իր բնածին տաղանդին, հիւանդոտ եռանդով նետվել է բանկային «հաշիւների» ասպարէզը, և ամբողջովին խրված այդ «հաշիւների» մէջ, այլ ևս չէ կարողանում իր խօսքի, գրչի, լոգիկայի ոյժով լռեցնել այնպիսի թոյլ հակառակորդներին, ինչպիսին է մի Մաչաբէլի, որի ամբողջ աջողութիւնը հիմնված է ոչ այլ ինչի վրա, եթէ ոչ Ճավճավաձէի գրգռված կրքի և «բանկային» ծայրահեղ յաջտակութեան վրա...

Վրաց ինտելիգէնցիան և աղնւականութիւնը անպայման մեղաւոր են ամբողջ Վրաստանի առաջ, որ փոխանակ զսպելու երկու անձնական հակառակորդների չափից դուրս լարված կրքերը, որը սպառնում է բանը հասցնել բռունցքի, և նոյն իսկ դաշոյնի, ընդհակառակն, իր մասնակցութեամբ աւելի ևս «փուղ է ածում կրակի վրա», դարձնելով բանկային ժողովները անվերջ, անմիտ, աննպատակ և վերին աստիճանի անախորժ կռիւների ասպարէզ...

Այդ ժողովները, իբրև խարակտերիստիկ վրաց ինտելիգէնցիայի և աղնւականութեան,—ճշմարիտ որ թողնում են ծանր, ճնշող, յուսահատեցնող տպաւորութիւն։

Խ. Մալումեան

ԲԱԳՈՒԻ ԿԷՐՈՍԻՆԱԳՈՐԾՈՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 28-ին Բաքուում տեղի ունեցաւ Բաքուի կէրոսինագործների դաշնակցութեան ընդհանուր ժողովը։ Ներկայ էին բազմաթիւ կէրոսինագործներ։ Նախագահ ընտրվեց Պ. Ղուկասեան, որը համառօտ կերպով հաղորդեց ժողովականներին այն հարցերը, որոնք պիտի քննվեն ներկայ ժողովում։ Ժողովի պարապմունքներն էին դաշնակցութեան 9 ամեայ (ապրիլի 1-ից մինչի 31 դեկտեմբերի 1895 թ.) գործունէութեան հաշուի քննութիւնը, 1896 թ. համար կազմած նախահաշուի հաստատութիւնը և ներկայ 1896 թ. հաշիւները քննելու համար վերաստուգող մասնաժողովի ընտրութիւնը։

Թէ հաշուի և թէ նախահաշուի հետ ժողովականները արդէն ծանօթ էին, որովհետև նախօրօք նրանց տպագրված օրինակները ուղարկված էին դաշնակցութեան մասնակցող բոլոր կէրոսինագործներին։ Հաշիւը և նախահաշիւը կազմած էին թէպէտ համառօտ, բայց ամփոփ և բարեխիղճ կերպով, ուստի առանց որ և է խօսակցութեան միաձայն հաստատվեցին։ Վերաստուգող մասնաժողովի ընտրութիւնը տեղի ունեցաւ գաղտնի քուէարկութեամբ. ընտրվեցին պարոններ՝ Թաղիանոսեան, Մեղվեդով և Գալպերին։ Ժողովում ուշադրութեան արժանի ոչ մի հարց չը յարուցվեց։

Այս առիթով աւելորդ չենք համարում մի քանի տեղեկութիւններ տալ անցեալ տարվայ հաշուից։ 1895 թ. ապրիլի 1-ին, երբ նոր հիմքերի վրա կազմակերպվեց ներկայ դաշնակցութիւնը, նա կէրոսինագործներից ընդունեց թէ Բաթումի և թէ արտասահմանի պահեստներում կէրոսին 3,094,189 պուդ, դիստիլատ 340,094 պուդ, ընդամենը 3,434,283 պուդ։ 1895 թ. ապրիլի 1-ից, մինչև 31-ն դեկտեմբերի ուղարկված է երկաթուղով Բաթում՝ կէրոսին 22,058,527 պուդ, դիստիլատ 3,608,566 պուդ, Պետրովսկի վրայով Նովորոսիյսկ՝ կէրոսին 936,295 պուդ, ընդամենը ուղարկված է՝ 26,603,388 պուդ։ Դաշնակցութեան տրամադրութեան տակ ուրեմն եղել է ապրանք 30,037,671 պուդ։

Նոյն ժամանակամիջոցում ծախված է դաշնակցութեան երեք գործակալների ձեռքով (Նոբելի, Բաշիլովի և Մանթաշևի) կէրոսին 25,431,105 պուդ, դիստիլատ 3,948,660 պուդ և փող է ստացված 6,092,992 ռուբլի 90 կոպէկ։ Առ 1-ն յունվարի 1896 թ. դաշնակցութիւնը ունէր կէրոսին թէ Բաթումի և թէ արտասահմանի պահեստներում 657,706 պուդ, 131,535 ռ. 20 կ. արժողութեան։

Դաշնակցութեան մասնակցող կէրոսինագործները իրանց իւրաքանչիւր պուդ կէրոսինի համար յիշեալ հաշուի երեսով՝ ստանում են 20,17 կոպ.։ Հաղորդելով այդ բոլորը, աւելորդ չենք համարում յիշեցնել, որ հին դաշնակցութիւնը 1894 թ.ին իւրաքանչիւր պուդ կէրոսինի համար վճարել է 6,25 կոպ., իսկ 1895 թ. յունվար, փետրվար և մարտին՝ 7 կոպ.։ Թէ ինչից է ծագում այդ մեծ տարբերութիւնը գների մէջ, այդ մենք կը փորձենք պարզել մի այլ յօդուածով, երբ բաւականաչափ նիւթ կունենանք այդ հարցը պարզելու համար։

Ֆ. Մարգսեան

ՆԻԺԵԳՕՐՕԴԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆ ԱՅՑԵԼՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏԱՐԻՖԸ

«Сборникъ Тарифовъ» պաշտօնական հրատարակութեան №723 մէջ զետեղված է Նիժեգօրոդեան համառուսական գեղարուեստական արդիւնաբերական ցուցահանդէսն այցելողների համար սահմանած էժանացրած ժամանակաւոր տարիֆը։ Այդ տարիֆն էլ մտցրված է մայիսի մէկից մինչև նոր փոփոխութիւն։ Այդ տարիֆը բացի այն որ էժանացրած է, այլ և ցուցահանդէսն այցելողներին հնարաւորութիւն է տալիս ճանապարհորդութիւնն ընդհատ-ընդհատ կատարելու, այն պայմանով միայն, որ ճանապարհորդութեան ամբողջ ժամանակամիջոցը երեք ամսից աւելի չը տեւի՝ հաշուելով տոմսակն ստանալու օրից։ Ընդհատել ճանապարհը կարելի է ամեն մի կայարանում, միայն թէ որ և է երկաթուղու (օրինակ անդրկովկասեան) միջանկեալ կայարանում (օրինակ Գորի) ընդհատելու դէպքում, պիտի տոմսակը ներկայացնել կայարանի գլխաւորին, նախ հանելուն պէս և ապա ճանապարհորդութիւնը նորից վերըսկսելիս, որպէս զի տոմսի վրա նշանակեն օրաթիւը։ Որ և է երկաթուղու վերջին կայարանում ընդհատելիս (օրինակ Բաթում, Բագու) կարիորութիւն չը կայ տոմսերը ներկայացնելու ոչ տեղ հասած ժամանակ, ոչ էլ, օրինակ, Սեվաստոպոլից կամ Պետրովսկից ճանապարհորդելիս։ Որպէս զի տոմսակը վերադարձի համար իր ոյժը պահի, պիտի Նիժնիում ներկայացնել կայարանի գլխաւորին։ Սրա համար ստիպողական ժամանակ չէ որոշված, այլ թողնվում է ճանապարհորդի կամքին՝ միայն թէ ընդհանուր ժամանակը—գնալը, ընդհատումը

ին տասնեակ տարիներով (Դէֆելիչէն պէտք էր նստէր 20 տարի, բայց նա ազատվեց վերջին ամնիստիայի շնորհիւ, որ եղաւ Կրիսպիի անկումից անմիջապէս յետոյ) բանտերը նետելուց յետոյ, Սիցիլիա ապստամբ կղզին պաշարված հրատարակեց։ Զուտ թիւրքական պայմաններ, այնպէս չէ, ընթերցող, և այդ բոլորը կատարվում էր լուսաւոր Եւրոպայի մի պետութեան մէջ... յանուն մեծագոչ liberté, fraternité-ի։ Թողնենք։

Ինչու էր Սիցիլիան ապստամբվել. նայենք այդ հարցին, որ երկարաձիգ յօդուածների ու թղթակցութիւնների նիւթ էր տուել եւրոպական մամուլին։ Ինչու էին ապստամբվում Սիցիլիայի գիւղացիները։ Թւում է, թէ հարկ չը կայ պատասխանելու, խնդիրը այնքան պարզ է, պատճառները այնքան հասկանալի։

Եթէ այսօր մէկը վերկենայ ու պնդէ, թէ այդ ապստամբութիւնը մի քանի ագիտատորների գործ է, նրան կը համարեն խելացնոր, զուրկ ամենատարրական գիտելիքներից։

Չը լինէր Սիցիլիա կղզու վերջին ծայր թշուառութիւնը, չը լինէին լատիֆունդեաները, հողերի հրէշաւոր կենտրոնացումը, չը լինէր քաղցը և գոյութեան անողոք կռիւը,—ոչ Դէֆելիչէն, ոչ Բարբատոն, ոչ հարիւրաւոր Բարբատոներ աջողութիւն չէին ունենայ, նրանց պրոպագանդը հող չէր գտնի։ Թող չը կարծէ ընթերցողը, որ մենք ուրանում ենք անհատի գործունէութեան ոյժը պատմական այս կամ այն անցքի միջոցին. խնդիրը պատճառի և հետևանքի մէջ է, հարցը առաջնակարգ ֆակտորի մասին է։ Թողնենք այդ, հեռու կը տանէ մեզ։

Երկու խօսք Սիցիլիայի մասին աւելորդ չէր լինի գրել—այնքան հետաքրքիր է այդ կղզին հէնց իր թշուառութեան տեսակէտից։ Եթէ կայ մի անկիւն արևմտեան Եւրոպայում, ուր մնացեսական ճակատագրական ոյժը՝ միացած բռնակալ ուեերիչ գործունէութեան հետ ստրկացրել է միլիոնաւոր աշխատաւոր ընդհանրութիւնը,—անշուշտ դա Սիցիլիան է։

«Այդ կղզին, որ շատ տեղերում կատարեալ երկնային դրախտ է ներկայացնում, ունի նաև այնպիսի անկիւններ, ուր ագրիկական բարբարոս պայմաններ են իշխում, ուր լատիֆունդեաների—մի քանի հարստականների լայնատարած հողերի վրա միլիոնաւոր ստրուկներ են անքում, ստրուկներ, որոնք աւելի ողորմելի կացութեան մէջ են, քան հին դարերի ստրուկները, և վերջին դարերի ճորտերը—վերջինները ունէին դէթ իրանց օրականը հացը»—այսպէս է խօսում Ադոլֆո Ռոսսին,—մի մարդ, որ անաչառ կերպով և հանգամանօրէն ուսումնասիրել է երկիրը։ *)

Կղզին համեմատած ցամաքի հետ աւելի ողբալի վիճակի մէջ է, ժողովուրդը աւելի ագէտ, վաշխառուների և կապալառուների կեղեքումները աւելի անսիրտ, հողային կենտրոնացումը—առասպելական։ Վերջին պատճառի մէջն է արմատական չարիքը։ Լատիֆունդեաները պատկանում են բարօներին, որոնք մեծ մասամբ ապրում են ցամաքի վրա կամ արտասահմանում և գիւղացիների հետ տեսնում են հաշիւները իրանց կապալառուների միջոցով։ Այդպէս, Սիցիլիանա գաւառի (կղզու մի մասը) բոլոր կալուածները պատկանում են մի հատիկ բարօնի, որ միջնադարեան ֆէօդալի նման ապրում է առանձնացած իր դղեակի մէջ. հեշտ է երեակայել ազգաբնակութեան ճորտային վիճակը, կապալառուների և ենթակապալառուների հարստահարումները։

Չենք խօսում հարկային սիստեմի, հարկերի անասելի ծանրութեան մասին, որոնք ընկած են աշխատաւոր ընդհանրութեան վրայ։ Անեկդոտի ձևով պատմում են հետևեալ կուրեօզը, որը սակայն խիստ ընորոշ է։ Այծերը տուն դառնալիս՝ հարկահաւաքները նրանց ծծերին նայելով՝ արդէն նախօրօք որոշում են, թէ որքան կաթ կը տայ այծը, և դեռ կթելուց առաջ առնում են հարկը։ Էշը և ջորին գեղջուկի անհրաժեշտ կենդանիներն են. մէկ էշից առնում են 5 լիրա, մէկ ջորուց՝ 10 լիրա։ Հարկային սիստեմը ոչ մի տեղ արևմտեան Եւրոպայում այնքան չէ ծանրացած գիւղացու, աշխատաւորի վրա, որչափ Սիցիլիայում, և ընդհանրապէս Իտալիայում։ Պատճառները հասկանալի են. երկիրը աղքատ է, արդիւնագործութիւնը տակաւին խակ, չը զարգացած, իսկ այդպիսի երկիրներում կեղեքման առարկան գլխաւորապէս գիւղացին է, նա է տիրող ոյժի պատուանդանը։

Սակայն գիւղացու կեղեքումները ևս ունեն իրանց որոշ սահմանները, որից անցած՝ այլ ևս ընկնվում է դիմադրող ոյժը, մի ծայրահեղութիւնը միւս ծայրահեղութիւն է ծնեցնում, ապացոյց 1893 թ.ի Սիցիլիայի անցքերը, ապացոյց այն, որ այդ կղզու բնակիչները այսօր ունեն արդէն կազմակերպված միութիւններ (Fascio dei laboratori), տարածված կղզու բոլոր կողմերը։ Ահա այս միութիւնների կազմակերպողներն էին՝ Դէֆելիչէ, Բարբատո, Գարիբալդի-Բոսկո հերոսները, որոնց պաշտում է այսօր Սիցիլիայի ժողովուրդը։

—

Այժմ երկու խօսք Սիցիլիայի իսկական պրոլէտարիատի մասին։ Դրա համար հարկաւոր է թափանցել ծծմբահանքերի խորքերը, որոնք չափազանց առատ են այդ երկրում։ Պ. Ռոսսին ներկայացնում է մեր առջև մի կատարեալ տարտարոս։ Աշխատաւորներն են մեծ մասամբ 8 տարեկանից սկսած մանուկներ (Karusi), ստորերկրեայ նեղլիկ ու մութ անցքերում, սարսափելի օդի մէջ։ Այդ մանուկները յանձնվում են իրանց տէրերին իբրև լիակատար ստրուկներ։ Ծնողը վաճառում է իր որդուն դիցուք 100 լիրայով, ստրկատէրը այդ գումարի փոխարէն, որքան կարելի է, երկար չահագործում է իր գերիին։ Աշխատեցնում են դաղանակներով։ Քիչ չէ պատահում, որ տէրերը կամ վերակացուները հրուանդելով՝ սպանում են մանուկներին։ Եթէ Karusi-ն փորձում է երբեմն դաղտնի փախչելու,—մահն է նրա բաժինը։

Երկու տարի առաջ միութիւնների շէֆը—Դէֆելիչէն՝ Գարիբալդի-Բոսկոի հետ ճանապարհորդում էին Սիցիլիայում։ Karusi-ների դժոխային չարչարանքները ամեն տեղ դրաւում էին նրանց ուշադրութիւնը և խորը խոցոտում նրանց սրտերը. մի տեղ այնքան սրտաչարժ էր տեսարանը, որ մեր հերոսները այլ ևս չը կարողացան զսպել իրանց և երեխաների պէս սկսեցին լալ...

«Զարհուրելի տեսարաններ շատ եմ հանդիպել իմ կեանքում—ասում է Ադոլֆո Ռոսսին,—եղել եմ իբրև ժուրնալիստ Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում, Աֆրիկայում, Ամերիկայում, տեսել եմ, ինչպէս հրացանաղարկ են արել մարդկանց, տեսել եմ, ինչպէս Լինչի օրէնքով մահացրել են նրանց, կախաղան են բարձրացրել, տեսել եմ մահվան սոսկալի դէպքեր, անթիւ, անհամար արիւնալից կոտորածներ, սակայն երբէք այնքան խորը չեմ յուզվել ես, ինչպէս Karusi-ների տանջանքներին ականատես լինելիս։»

Այժմ կը կրկնենք մենք, վերջ դնելով մեր նամակին, այդ դժբախտ կղզու դժբախտ ժողովուրդը չէ ապրում. դա կեանք չէ, դա կիսաքաղց, անասնական գոյութիւն է։ Սիցիլիայի բնակիչը՝ թիւրքահայ գիւղացու նման չէ աշխատում ապրելու համար, այլ ապրում է տանջվելու համար։

Մ. Ց.

և վերադարձը երեք ամսից աւելի չը տեւի։ Ցոմսականերն իրանց ոյժը պահում են, եթէ նոյն իսկ այդ ժամանակաշրջանում ցուցահանդէսը փակվի։

Կովկասցիներիս համար 18 մարշրուտ է որոշած և նրանք սկսվում են մեր երկաթուղու հետեւեալ հինգ կայարաններից՝ Բագուից, Գանձակից, Թիֆլիսից, Քութայիսից և Բաթումից. և միայն այդ կայարաններում կարելի է ստանալ վերոյիշեալ տոմսերը։

Ահա այդ մարշրուտները և համապատասխան գները՝ III կարգով գնալու և վերադառնալու համար։

Բագուի և Պետրովսկի, Բոստովի, Կոզլովի, Բեռզանի, Մոսկվայի վրայով—Բագուից 24 ր. 60 կոպ., Գանձակից 27 ր. 20 կոպ. Քութայիսից 30 ր. 20 կոպ.։

Բագուի և Ցարիցինի, Կոզլովի, Բեռզանի, Մոսկվայի վրայով—Բագուից 16 ր. 20 կոպ, Գանձակից 19 ր., Քութայիսից 22 ռուբլի։

Բագուի և Սարատովի, Բեռզանի, Մոսկվայի վրայով—Բագուից 14 ր. 60 կոպ., Գանձակից 17 ր. 40 կոպ., Քութայիսից 20 ր. 40 կոպ.։

Բաթումի և Սեվաստոպոլի, Լոզովայի, Կուրսկի, Մոսկվայի վրայով—Գանձակից 23 ր. 80 կոպ. Քութայիսից 20 ր. 80 կոպ., Թիֆլիսից 22 ր. 40 կոպ.։

Բաթումի և Նովորոսիյսկի, Բոստովի, Կոզլովի, Բեռզանի, Մոսկվայի վրայով—Թիֆլիսից 23 ր. 40 կոպեկ։

Թիֆլիսի, Վրաստանի ճանապարհով և Վլադիկավկազի, Բոստովի, Կոզլովի, Բեռզանի, Մոսկվայի վրայով—Բաթումից 25 ր. 20 կ. Քութայիսից 24 ր. 40 կոպ. Թիֆլիսից 22 ր. 60 կոպ., Գանձակից 24 ր. Բագուից 26 ր. 80 կոպեկ։

Նաւի, այլ և կառքի վարձը Վրաստանի ճանապարհին հոգում է ճանապարհորդը։

Մենք առաջ բերինք III կարգի գները։ II կարգի գին ստանալու համար պիտի համապատասխան գինը բազմապատկել $1^1/_2$-ով, իսկ I կարգինն ստանալու համար նոյն գինը պիտի բազմապատկել $2^1/_2$-ով։ Ծանրոցը՝ ընդհանուր օրէնքով։

Գ. Տէր-Ղևոնդեանց

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

I

«Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի պատմութեան»—Սա. Մալխասեանի։ Վիէննա, 1896.

Փաւստոսի մասին շատ են խօսել մեր հին պատմութիւնը ուսումնասիրողները և դեռ պիտի խօսեն, որովհետև այս պատմագիրը իր անձնաւորութեամբ պատմական մի հանելուկ է ներկայացնում։ Մինչև այժմ հարց կար այն մասին՝ թէ ինչ լեզուով է գրել Փաւստոսը իր պատմութիւնը և թէ ինքն ինչ ազգից էր։ Ընդունելով որ նա իր ժամանակի անցքերն է նկարագրում, բանասէրները աշխատում էին հաստատել այդ հանգամանքը և ցոյց էին տալիս, որ Փաւստոս յոյն էր, գրել է իր պատմութիւնը IV դարի վերջերում, ապա պատմութիւնը թարգմանվել է հայերէն։

Այժմ պ. Մալխասեան գտնում է, որ Փաւստոս անունով պատմագիր չէ եղել, որ Փաւստոսի պատմութիւնը ժամանակակից մարդու գրածը չէ, այլ կազմված է V դարում զանազան աւանդութիւններից և առասպելներից։ Այդ գործը նա համարում է ժողովրդական պատմութիւններից և առասպելներից։ Այդ գործը նա համարում է ժողովրդական պատմութիւնների հիւսուածք, որ հաւաքել է մի անյայտ հայ, թարգմանելով Փաւստոս անուան տակ, որպէս զի հաւատալի դարձնէ իր ասածները։—Ուսումնասիրողը իր այդ ենթադրութիւնները հաստատում է մի շարք հետաքրքրական փաստերով, որոնց նա ձեռք է բերում համեմատութիւնների, ժամանակագրութեան և լեզուական քննութիւնների միջոցով։—Գրքոյկը (59 եր.) կարդացվում է հետաքրքրութեամբ։ Հեղինակը կարողացել է տալ իր ուսումնասիրութեան ամփոփ ձև, լեզուն մշակված է, պարզ. փաստերին և դատողութիւններին վերաբերվել է բարեխղճութեամբ։ Առհասարակ դա մի լուրջ աշխատութիւն է, որ կարող է բաւական լոյս սփռել առարկայի վրա։ Տպագրութիւնը շատ գեղեցիկ է։

II

«Նոր ժողովածու. Գ. Պրակ. Միջնադարեան հայոց տաղեր և ոտանաւորներ»—Կ. Կոստանեանցի։ Թիֆլիս, 1896.

Աչքի առաջ ունենալով, որ բացի կրօնական բանահիւսութիւններից, անցեալ դարերը համարեա ոչինչ դրական գործեր չեն թողել, պ. Կոստանեանցի գործը, որ եղել է հաւաքել երգեր, ոտանաւորներ և տալել, անօգուտ չէ հայ բանասիրութեան համար։ Տպված երգերի ամենամեծ մասը ուրախութեան և սիրոյ տաղեր են, որոնք, երևի, ժողովրդական են եղել։ Դրանք հետաքրքիր են իբրև բանաստեղծական արտայայտութիւններ, որոնք պարունակում են նաև ժամանակի աշխարհայեցողութիւնները։ Զը լինելով մեր գրականութեան համար մի առանձին նշանաւոր գիւտ, նրանք կը մնան իբրև հում նիւթ ուսումնասիրողների համար։

III

«Անտառապահը»—Ա. Սմիրնովայի. թարգմ. ռուսերէնից։ Թիֆլիս, 1896.

Եթէ պատմութիւնը քիչ ձգձգված չը լինէր, մանկական ընթերցանութեան համար մի սիրուն, դաստիարակիչ բան կը լինէր։ Պատմութիւնը շատ տենդենցիոզ է. հեղինակի միտքն է եղել ցոյց տալ, թէ ինչ վատ բան է դատող մեծամտութիւնը։ Եւ այդ պատճառով բերել է անտառապահի պատմութիւն, մի պատմութիւն, որ ինքն ըստ ինքեան բաւականաչափ պարզում է այդ միտքը. բայց հեղինակը բաւական չէ համարել այդքանը, այլ աշխատել է միտքը ընդգծել շատ տեղերում, այնպէս որ գեղարուեստական գործը աւելի քարոզչական է, քան պատմող, տպաւորող։ Բայց և այդպէս, անտառապահի տիպը շատ գեղեցիկ է դուրս բերած։ Այդ կոպիտ, լուռ, մարդկանց հասարակութիւնից հեռացած մարդը ունի մի սիրող սիրտ. անտառի խորքում նա հիւսել է իր փոքրիկ բոյնը, ուր կենդանութիւն, սէր ու քաղցրութիւն տարածողը մի թռչուն, անդամալոյծ աղջիկ է, որին գտել է անտառապահը և պահում, խնամում է մի սիրով, որ միայն հայրական սրտի մէջ կարելի է գտնել։—Կալուածատիրոջ տղան, որ պատմում է անտառապահի մասին, չար, դատող մի երեխայ է. անտառապահը նրա մի չարութիւնը պատժելու համար մի անգամ քաշում է նրա ականջը. այս պատճառով կալուածատէրը զրկում է անտառապահին իր պաշտօնից։ Բայց մի օր անտառում մոլորվում է այդ չար տղան. սկսվում է փոթորիկ, անձրև և նա կը կորչէր, եթէ անտառապահը չը գտնէր նրան, չը տանէր իր տնակը։ Այդտեղ է տղան տեսնում թէ ինչ քնքոյշ սրտի տէր է արաքուստ կոպիտ անտառապահը, որ մի քանի օրից յետոյ իր պատճառով պիտի հեռանար իր սիրած, տաքցրած բոյնից։ Տղան կերպարանափոխվում է, խնդրում է հօրը նորից թողնել անտառապահին իր պաշտօնում և սիրում է նրան։—Պատմուածքի համառօտութիւնը այսքան կոկ է և տպաւորող. բայց մանրամասնութիւնների մէջ հեղինակը մոցրել է շատ արուեստականութիւն։

Թարգմանութիւնը վատ չէ, թէև տեղ-տեղ նը-կատվում է բնագրի ճնշումը։ Խորհուրդ կը տայինք աւելի ուշադիր լինել թարգմանութեան ժամանակ։ Գրքոյկի արտաքինը մաքուր է և լաւ տպաւորութիւն է թողնում։

Լ.

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ապրիլի 28-ին

Ամեն անգամ, երբ ձեռք ենք առնում «Արձագանք» թերթը, ամենից առաջ հետաքրքիր միտքն է անցնում մեր գլխով,—տեսնենք, «Արձագանքի» այս համարում քանի պատչաւոր սուտ կայ, քանի աղայի ջէբին խունկ է ծխում Աբգար Յովհաննիսեանի օրգանը և քանի սուտ հայհոյանքներ է վիժել թերթի այս և այն աշխատակիցը... Եւ իրաւ, մամուլի ու հրապարակախօսութեան այդ դափնները կարծես կապալով է վերցրել «Արձագանք» թերթը։ Այդ կողմից Ամերիկայի բոլոր միլիոնատէրերն անգամ կարող են նախանձել «Արձագանքի» հարստութեանը... Իսկ սուտեր շարադրել—այդ փեշակում հօ «Արձագանքը» նը-մանը չունի։ Մեզ թւում է, թէ այդ թերթը իր խմբագրով և բոլոր մօտաւոր աշխատակիցներով ու հեռաւոր թղթակիցներով կամ ծնվել են ապրիլի 1-ին, կամ ապրիլի 1-ը իրանք են հնարել...

Մի կողմը թողած հայոց Բարեգործական և Հրատարակչական ընկերութիւնների ընդհանուր ժողովներին վերաբերեալ սուտերով լի նկարագրութիւնները, որոնք օրը ցերեկով լոյս տեսան «Արձագանքում», մենք ուզում ենք մի քանի խօսք ասել Ծխական ստորագրութեամբ Մոսկվայից հաղորդած մի աննեբելի և պոչաւոր ստի մասին, որ այս օրերս լոյս տեսաւ «Արձագանքի» № 44-ում։ Կարելի էր ամենևին ուշադրութիւն չը դարձնել այդ ստի վրա, եթէ նա չոչափելիս չը լինէր հասարակութեան և հասարակական գործիչի փոխադարձ յարաբերութիւնները։ Սակայն այդպիսի սուտը, որ կարող է և՛ մոլորեցնել, և՛ անբարոյականացնել հեռաւոր հասարակութիւնները, չէ կարելի անուշադրութեան տալ և չը մերկացնել։

Ծխականը նախ ի լուր աշխարհի Մոսկվայից աւետում է, թէ ինչպէս պ. Ց. Ժամարաեանը մարդիկ է հրաւիրել իր տունը խորհրդակցելու Գասպարեան անկելանոցի յիսնամեակի առիթով Մոսկվայի հայ ուսանողների օգտին հանդանակած ֆոնդի մասին. թէ ինչպէս հրաւիրված մարդիկ հաւաքվել են, ասել են, խօսել են, երկար ու բարակ վիճել են գլխաւորապէս հեռաւեալ երկու հարցի մասին,—արդեօք ֆոնդի տոկոսներն ուղղակի տալ ուսանողութեան ձեռքը թէ ոչ, և օգնել «առանց կրօնի խարութեան» ըսկ՞ր հայ ուսանողներին, թէ միայն հայ լուսաւորչական ուսանողներին... Այդ վէճերի մասին Ծխականը, ի հարկէ, միայն թռուցիկ և տոզամէջ է յիշում, երևի, ամաչում է խոստովանել, որ կան միրուքաւոր և նոյն իսկ «աղ-սակալ» մարդիկ, որոնք տասնեակ տարիներ մայրաքաղաքում ապրելով՝ դեռ այնքան խակ են մնացել, որ կարող են հաւաքվել և ամբողջ ժամեր վիճել այն մասին, թէ չորս խնձորը երկու երեխային հաւասար բաժանելու համար պէտք է ամեն մէկին երկու խնձոր տալ... բայց այդ բոլորի մասին մանրամասնօրէն մենք կը գրենք մի ուրիշ նամակով։ Առ այժմ խօսքը Ծխականի մի աննեբելի ստի մասին է, որ զարդարուն խօսքերով ամփոփված է Մոսկվայից նրա գրած նամակի վերջում։

Ծխականը իր նամակը վերջացնում է հետեւեալ տողերով. «Արձագանքի» մեծ. պ. խմբագրապետն արդէն երեք օր է՝ այստեղ է։ Ազգային ընտիր գործիչների երեսին կարօտ Մոսկվաբնակ հայերի ուրախութեան ու համակրանաց ամենն տեսակ ցոյցերին վերջ չը կայ։ Այսպիսի այցելութիւնները, որքան էլ պատահական լինին, առանց բարերաբեր հետեանքի չեն մնում հասարակութեան համար, մանաւանդ մի գաղութի, որի զգացածներն այժմ լաւ հասկանալու համար պէտք էր Մոսկվայում լինել. բառերով ձեզ՝ «մարգարէին յիրում գաւառի ունեցողներիդ» այդ դժուար է բացատրել»։ Ահա քեզ փառաւոր ստախօսութեան մի նմուշ, ընթերցող։ Որ «Արձագանքի» խմբագիրն այստեղ էր, այդ իրաւ է։ Ինչու համար էր ջափայ քաշելու Մոսկվա եկել—այդ ոչ մեզ է յայտնի, ոչ էլ շատ շատերին։ Հետաքրքրական էլ չէ։ Այսպէս թէ այնպէս՝ ճշմարիտն այն է, որ «Արձագանքի» խմբագիրն այստեղ էր։ Բայց վերկենալ և առանց ամաչելու ասել, թէ Մոսկվայի հայ գաղութը կարօտել էր նրա երեսին, իբրև «ազգային ընտիր գործչի երեսին», թէ «Մոսկվաբնակ հայերի ուրախութեան և համակրանաց ամենատեսակ ցոյցերին վերջ չը կար...» այդ նշանակում է «Արձագանքի» խմբագրին ծաղրի առարկայ դարձնել և նրա անփառաք անուան փառաւոր արջի ծառայութիւն մատուցանել... Այդպիսի սուտը, պ. Ծխական, մարդու ականջին էլ չեն ասում, ուր մնաց թէ լրագրի մէջ են տպում։ Միթէ կարծում էք, որ Մոսկվան խանքէնդ գիւղն է և Մոսկվաբնակ հայերն էլ խանքէնդցիներ, որոնք իրանց կեանքում, գուցէ, չը-նորհքին մարդու երեսին կարօտ՝ կարող էին Աբգար Յովհաննիսեանին առաքեալի տեղ ընդունել։ Մոսկվայի հայ գաղութը իր կեանքի ընթացքում տեսել է և մօտից ճանաչել այնպիսի նշանաւոր հայ գործիչներ, որպիսիք էին՝ Նազարեան, Նալբանդեան, Ռափայէլ Պատկանեան, Էմին և վերջապէս Շահազիզեան, որ դեռ կենդանի է և այսօր այդ գաղութի անդամն է։ Իսկ այդ գործիչների և ձեր «ազգային ընտիր գործչի» մէջ՝ գիտէք ինչ սարեր կան,—Ալպեան սարեր...

Այստեղի ամբողջ հայ ուսանողութիւնը, որ Մոսկվաբնակ հայերի աչքի ընկնող մասն է կազմում, ձեր «խմբագրապետի» երեսին էլ չը նայեց, հասարակութեան մեծ մասն անտարբեր մնաց, շատերը նոր իմացան, որ աշխարհիս երեսին Աբգար Յովհաննիսեան կայ, շատերն էլ ոչ նրա գալն իմացան, ոչ էլ գնալը... Էլ ինչով նը-շանաւոր եղաւ «Արձագանքի» խմբագրի Մոսկվայի հայ գաղութին այցելելը, ինչ բանում ե-ղաց այդ գաղութի ցնծութիւնը, նրա «համակրանաց ամենատեսակ ցոյցերին վերջ չը լինելը»... Իրաւ է, գտնվեցան մի քանի աղաներ և այդ աղաների պոչից պինդ կպած մի երկու-երեք որոշ գոյնի ինտելիգենտ պարոններ, որոնք Աբգար Յովհաննիսեանին կոմպլիմենտներ էին շռայլում, բայց միթէ Մոսկվայի հայ գաղութը միայն այդ մի քանիսներիցն է կազմված։ Ցաւանի է նոյնպէս, որ այդ «մի քանիսները» ամեն ծակ ու ծուկերում աշխատում էին մի հասարակական օվացիա անել իրանց խեղճի խմբագրին, հասարակական ճաշ տալ նրան, բայց խեղճերի մուրաղն անկատար մնաց... Գուցէ պ. Ծխականը մանաւոր տնում, մանաւոր մարդու սարքած կերուխումն է համարում հասարակական «համակրանաց անվերջ ցոյցեր»... Այն ժամանակ պէտք է սրտանց ցաւել «Արձագանքի» թղթակցի մտաւոր ընդունակութիւնների վրա, որ նա չէ կարողանում մասնաւորը զանազանել ընդհանուրից, անհատականը—հասարակականից։ Այդպիսի մանաւոր քէֆեր Մոսկվայի հայ աղաների ամենից տարին տասներկու ամիս անպակաս են լինում։ Ի՞նչ զարմանք, որ այս անգամ այդ քէֆը տեղի ունեցաւ «Արձագանքի» խմբագրի մասնակցութեամբ կամ քէֆը սարքվեց հէնց նրա համար։ Մանաւանդ որ քէֆ սարքողներն իբրև գործնական մարդիկ այս դէպքում կարող էին և իրանց չահն աչքի առաջ ունենալ. նրանք գիտեն, որ «Արձագանքի» խմբագիրն այդ ճաշը ընաւ չի մոռանայ և տեղը եկած ժամանակը իր թերթի էջերում խունկ ու բուրվառ ծխելով՝ մէկին հազարով երախտահատոյց կը լինի...

Վերջացնելով մեր խօսքը, թէ ընդհանրապէս «Արձագանքի» մասին, որ միշտ ստերի տոպրակ է հանդիսանում, և թէ մասնաւորապէս Ծխականի մասին, պէտք է կրկնենք ռուսաց մի ասացուածք. «Ври, да знай мѣру!»։

Ծանօթ

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
(Հեռագրով)

Բագու, մայիսի 10-ին, 9 ժամ.

Թոյլ տուէք մեզ՝ յայտնել բոլոր Արասխանեանցի այն վերին ատիճանի անվայել արարքի դէմ, որ նա իրան թոյլ է տուել «Տարազում» Մալումեանի դէմ։ Չը խօսելով Արասխանեանցի՝ թէ գրական էթիկայի և թէ տարրական վայելչութեան տեսակէտից անպայման դատապարտելի վարմունքի մասին, մենք այդ արարքը գտնում ենք վիրաւորական հայոց հասարակութեան և ինտելիգենցիայի համար, որովհետև դրանով ենթադրվում է հասարակութեան և ինտելիգենցիայի մի այնպիսի անկուլտուրական և անկիրթ վիճակ, որի մէջ միայն հնարաւոր է թոյլ տալ անտարբեր վերաբերմունք դէպի արիւր ինցիդենտի հերոսը և զոհը։ Մինչդեռ մեզ ամենքիս համար որ և է կասկածից դուրս է այն, որ ներկայ դէպքում բոլոր օրինաւոր մարդկանց համակրութիւնը Մալումեանի կողմն է, որը ենթարկվեց զզուելի յարձակման, ինչպէս որ անկասկածելի է և այն, որ Հախումեանի վրդովեցուցիչ վարմունքը զզուանքի զգացում յարուցեց հայ հասարակութեան բոլոր խաւերում։ Եւ եթէ շատերը չը յայտնեցին իրանց զգացմունքները, դրա պատճառն այն էր միայն, որ նախ՝ համարում էին այդ զգացմունքները շատ տարրական և առանց այն էլ հասկանալի և յատուկ ամբողջ ընթերցող հասարակութեանը, և երկրորդ՝ չէին կամենում երկար ժամանակ զբաղեցնել մամուլի էջերը Հախումեանի տգեղ վարմունքի յիշողութիւններով, այն Հախումեանի, որ առանց այդ էլ ամենուր հոչակ է վայելում հայոց հասարակութեան մէջ, որը վաղուց արդէն դրոշմել է այդ քամելէոնի ճակատին նրա վաստակած «մտքի պոռնիկ» (прелюбодѣй мысли) անունը։ Ցաւ է լսել, որ «Մուրճի խմբագրին, այն «Մուրճի», որ համարվում էր մաքուր օրգան, անմատչելի են այս այլասերական ճշմարտութիւնները և վայելչականութեան տարրական զգացմունքները։ Մենք անհնարին ենք համարում լռութեան տալ Արասխանեանցի տգեղ վարմունքը, որը մի նոր ապացոյց է, թէ որ ատիճան սաստիկ վայրենացել են մեր գրական բարքերը։

Բժիշկ Աղամիրզեան, Կաճկաճեան, Գրիգոր Քալանթար, Գիւլնազարեան, Դաստակեան, Վաչեան, Դաւթեան, Գալստեան, Ալէքսանդր Աբէլեան, Վարդանեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բերլին, մայիսի 1-ին

Խնդրում եմ «Մշակի» մէջ զետեղել հետեւեալը.

Բերլինի հայ ուսանողութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը պարոններ Ռուբէն Աւագեանցին և Սիմէօն Պառաւեանցին, առաջինի նուիրած 400 մարկի, և երկրորդի՝ ի յիշատակ իր հանգուցեալ կնոջ նուիրած 200 մարկի համար:

Ի դիմաց Բերլինի հայ ուսանողութեան՝

Ս. Ադամեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Սալմաստ, ապրիլի 15-ին

Սալմասայի Գրասիրաց ընկերութեան վարչական ժողովը խնդրում է «Մշակի» մօտակայ համարներից մէկում հետեւեալը հրատարակելու շնորհն անել: Գրասիրաց ընկերութիւնը ստացած է Երեւանից, Մարգար Մէլիք-Մարգարեանի միջոցով՝ 161 կոտոր գրքեր, որ հաւաքած են տիկին Հ. Տ. և օրիորդ Հ. Ս.: Ներկայումս յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը յարգելի նուիրատուներին և հաւաքողներին:

Ատենապետ՝ Ա. Յակոբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է թերթ ու կէսից:

—

Մեզ հաղորդում են հաստատ աղբիւրից, որ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Ալէքսանդրապոլի ճիւղի տեղական ընդհանուր ժողովը որոշել է ի յիշատակ Նոցա Կայսերական Մեծութիւնների թագադրութեան՝ Ալէքսանդրապոլի գաւառի չքաւոր գիւղացիներին 1200 ռուբլի բաժանել:

—

Մեզ հաղորդում են, որ երկրագործութեան մինիստրութիւնը Թիֆլիսի այգեգործական դպրոցի կառավարիչ է նշանակել ագրոնոմ Ս. Տիմոֆէէվին: Գիւղատնտեսական ընկերութիւնն իր կողմից առաջարկել էր կառավարչի պաշտօնի համար ագրոնոմ Լյարնովին:

—

«Շաւիղ» չաբաթաթերթը իր այս տարվայ 3-րդ համարում մի հետաքրքրական հարց է յարուցել հասարակական երկու խոշոր գումարների մասին: Մենք լրագրի այդ յօդուածը կարատպենք միւս անգամ:

—

Ռուս հրատարակիչ Իւժակով մի մեծ յօդուած է գրել «Русское Богатство» ամսագրի ապրիլի համարում՝ «Հայոց և թիւրքաց գործերը» վերնագրով: Յօդուածի գլխաւոր նպատակն է՝ ջանալ լուծել այն հարցը, որը, հեղինակի ասելով, ներկայումս գրաւել է ամբողջ քաղաքակիրթ և գիտական աշխարհի ուշադրութիւնը, այն է, թէ ով պէտք է տիրապետող դեր կատարի Փոքր-Ասիայում, հայերը, թէ քիւրդերը, կամ, ինչպէս ինքը հեղինակն է ասում, «Քիւրդստան, թէ Հայաստան»: «Այդ հարցը կը լուծի պատմութիւնը,—ասում է Իւժակով,—իսկ մեր գործը կը լինի ցոյց տալ լուծման տարրերը «իրերի բնական ընթացքի մէջ» և ցոյց տալ նպատակայարմար լուծման շանսերը, ինչպէս կարող է թելադրել մեզ բանականութեան և խղճմտանքի ձայնը»: Յօդուածն այնքան հետաքրքրական է և հեղինակի դրած թէզիսները այնքան նշանաւոր, թէև յաճախ վիճելի, որ մենք յաջորդ անգամ քաղուածօրէն կը ծանօթացնենք մեր ընթերցողներին նրա բովանդակութեան հետ:

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը որոշել է ուղարկել այգեգործական դպրոցի ուսուցիչներից մէկին Նիժնի-Նովգորոդի ցուցահանդէսը՝ ծանօթանալու այգեգործութեան վերաբերեալ արդիւնքներին և խորհրդակցելու ցուցահանդէս եկած այգեգործների հետ՝ արդիւնագործութեան զարգացման և կատարելագործութեան մասին:

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ Լէնքօրանի յայտնի կալուածատէր Թալիշխանովի կալուածները, ապրիլի 30-ին, Պետերբուրգում աճուրդով ծախվում էին: Այդ կալուածները գնահատված էին 1,000,000 ռուբլի: Ամենամեծ գինը աճուրդի ժամանակ, այն է 501,000 ռուբլի, առաջարկեց Բոմէյկո: Կալուածները ծախվում են Թալիշխանովի մանկութեան պատճառով: Կօնկուրսային վարչութիւնը չը հաստատեց աճուրդը:

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մենք ստացանք տպագրելու համար հետեւեալը. «Ներկայումս Պետերբուրգում տպվում է Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» աշխարհաբար թարգմանութիւնը, որը՝ առաջին տպագրութեան հետ համեմատած՝ այնքան փոփոխած է, որ բոլորովին նոր տպագրութիւն պէտք է համարել: Որպէս լսել ենք, Խորէն եպիսկոպոս Ստեփանէն ցանկանում էր Խորենացու պատմութեան հետ միաժամանակ տպագրել տալ և Փաւստոս Բիւզանդի պատմութիւնը, բայց տպարանական պայմանները արգելք եղան, և Փաւստոսը այժմ պիտի տպվի Խորենացու պատմութեան տպագրութիւնը վերջացնելուց յետոյ միայն»:

—

ՄԵՐՎԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 27-ին ծբխականների ժողով կայացաւ երէցփոխի ընտրութեան համար: Ձայների մեծամասնութեամբ երէցփոխ ընտրվեց վաճառական Դաւիթ Մէլիք-Մկրտչեանց: Մեր կարծիքով, ծխականների բարոյական պարտաւորութիւնն էր նոյն ժողովում մի արժանաւոր քահանայ ունենալու հարցն էլ բարձրացնել: Ցաւում ենք, որ այդ մասին ժողովականները չը հոգացին»:

—

ԵՐԵՒԱՆԻՑ հաղորդում են «Новое Обозрѣніе» լրագրին, որ Արաքս գետը վարարելով՝ ծածկել է Ջուալուզ գիւղը, Սուրմալուի գաւառում, և մօտ 30 հոգի խեղդվել են: Ջուալուզ գիւղը բաղկացած է 120 տնից. բնակիչները մընացել են առանց ապաստանի և կարօտ են անմիջական օգնութեան:

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼՍԻՑ մեզ գրում են. «Ամբողջ երկու տարի սպասելուց յետոյ վերջապէս մեզ մօտ բացվում է պղոստային հաղորդակցութիւն միւս կայարանների հետ: Թոյլատրված է այսուհետև առանց Օրդուբադ մտնելու անմիջապէս կառը վերցնել մինչև Աղա կայարանը: Երթևեկութիւնը չուտով կը սկսվի: Շուտով ձեռնամուխ կը լինեն և կայարանի կառուցման»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մեզ հեռագրում են Ֆիլիպսպոլից, մայիսի 9-ից, Ռուսաց գործակալութեան միջոցով. «Կ. Պոլսից ստացված լուրերին նայելով, այնտեղ գտնված է հայոց մի մեծ ընկերութիւն, որը նպատակ ունէր սպանել բարձրաստիճան պաշտօնեաներին: Տեղի են ունեցել բազմաթիւ ձերբակալութիւններ:»

—

Անգլիական հիւպատոսի հրաւէրով, Զէյթունն գնացած մի անձ, մարտի 27-ից գրած մի նամակում, հետեւեալ տեղեկութիւնները է տալիս այնտեղի կարօտեալների մասին: Կարօտեալների թիւը մօտաւորապէս 10,000 է, որից 7,000-ը փախստականներ են՝ հաւաքված 17 զանազան գիւղերից: Մնացած 3,000 զէյթունցիներ են: (Զէյթունի բոլոր բնակիչների թիւն է 7,000):

Զէյթունում ներկայումս կան 3,000-ից մինչև 4,000 հիւանդ մարդ, մեծ մասամբ տիֆով և դիզենտերիայով: Օրեկան մեռնում է 15—20 մարդ: Այստեղ միայն մի բժիշկ կայ, Շեպար, որ եկել է Այնթաբից մի 10 օր սրանից առաջ. նա շատ եռանդուն է, և օրեկան 200 հիւանդ է այցելում: Մի քանի ամսվայ մշտական սարսափը, վատ սնունդը և ծանր կեանքը քայքայել են թէ բնիկների և թէ փախստականների առողջութիւնը, այնպէս որ առողջ համարվողներն էլ իսկապէս տկար են, միայն թէ պառկած չեն, այլ շարժուն կմախքներ են ներկայացնում: Եթէ խօլերան մուտք գործի այս տեղերը՝ շատ առատ հունձ կը տանի. իսկ խօլերայի վտանգ կայ: Վերջին հինգ ամսվայ ընթացքում կոտորածներից, կռիւներից, քաղցից և հիւանդութիւններից այստեղ մեռել է մինչև 4,000 մարդ: Հագուստի, կայքի և փողի կողմից փախստականները բոլորովին զուրկ են. տեղացիները թէև աւելի բաւական վիճակի մէջ են՝ ունեն տուն, տեղ, հագուստ, սակայն բոլորովին աղքատացել են, որովհետև ամբողջ ամիսներ արդիւնագործութեամբ չեն զբաղվել և կերակրել ու խնամել են փախստականներին:

Զէյթունցիները նպաստ չեն ստանում, միայն մի հարիւր մարդ օգնութիւն է ստացել բրիտանական հիւպատոսից և ինձանից: Ինչ նպաստ որ դալիս է, գնում է փախստականների վրա. 1,500 մարդ ներկայումս կանոնաւոր կերպով նպաստ է ստանում: Բայց նրանց կարիքները շատ մեծ են. նրանց պէտք է ամբողջ տան սարք ու կարգ տալ, տնային անասուններ բաժանել, որպէս զի կարողանան կանոնաւոր տնտեսութիւն սկսել:

Հիւանդանոցի համար ծառայում է լուսաւորչական հայերի ընդարձակ դպրոցական շէնքը, որի մէջ զետեղված են քառասուն մահճակալ:

—

Ուէստմինստրի գազետը հրապարակագէս յայտարարել է, որ անգլիական նպաստող ֆօնդը, որի նախագահն է ինքը, ոչ մի յարաբերութիւն չունի քաղաքական կազմակերպութիւնների հետ: Ֆօնդի միակ նպատակն է ժողովել գումարներ և պաշտօնական ձեւով, այն է Կ. Պոլսի դեսպանատան միջոցով, կերակուր և զգեստ մատակարարել Հայաստանի թշուառներին: Ֆօնդի մասնաժողովը, ճիշդ զեկուցագրերի հիման վրա, վստահութեամբ յայտնում է, որ ոչ ֆրանսիական և ոչ ամերիկական միսիոնարները չեն խառնվել ոչ մի քաղաքական գործի մէջ, այլ ամենածանր հանգամանքներում առաջ են տարել օգնութեան գործը: Ամբողջ Անգլիան գիտէ, որ ֆօնդի նպատակը միայն մարդասիրութիւնն է: Լօնդոնի մէրը ողջունեց այդ մարդասիրական գործը. նոյն զգացմունքով համակված Դուբլինի, Իորկի, Լիվերպուլի, Մանչեստրի, Գլասգովի և ուրիշ 54 մեծ քաղաքների քաղաքագլուխները խրախուսել են գործը: Մասնաժողովը յոյս ունի, որ Ֆրանսիայի, Իտալիայի, Միացեալ-Նահանգների և Շվեյցարիայի օրինակին կը հետեւեն Ռուսաստանը, Աւստրիան և Գերմանիան և կօգնեն հաղարաւոր կարօտեալներին՝ մաքառելու մահվան սպառնալիքների դէմ:

—

Կ. Պոլսի մեր թղթակցի հաղորդած լուրը, թէ Նաստրէդդին Շահի ողբերգական մահը սուլթան Աբդուլ-Համիդի վրա սաստիկ ազդեցութիւն է գործել,—հաստատվում է ամեն կողմից: Կ. Պոլսի լրագիրներին խստիւ արգելված է ոչ մի լուր չը հաղորդել Շահի սպանութեան մասին, այլ նրա մահը բացատրել յանկարծական հիւանդութեամբ: Պալատում շատ յուզված են այն պատճառով, որ տիրապետող կուսակցութիւնը չարունակ երկիւղ է կրում երիտասարդ թիւրքերի կուսակցութեան կողմից: Բայց, դժբախտաբար, յուզվում են ոչ միայն երիտասարդ-թիւրքերը, այլ և հայերը: Շատ հայեր են ձերբակալված: Այս օրերս ձերբակալվեց մի հայ, որ սպանել էր մի ոստիկան: Ցայտնվեց, որ նա յեղափոխական կոմիտէի անդամ է:

—

Կ. Պոլսից հեռագրում են մայիսի 4-ից. «Երկու շտաբ-օֆիցէր և երկու դատաստանական քննիչ, որոնք քննութիւն են կատարել Մարաշում, ուղարկվում են Բէրէճիք, որ գտնվում է Եփրատի ափի վրա, յետ դարձնելու համար քրիստոնեաներին այն եկեղեցիները, որոնք վերածվել են մզկիթների, որպէս զի դրանով գոհացում տրվի օտար պետութիւնների հիւպատոսների գլխաւոր պահանջներից մէկին:

—

Ուէստմինստրի գազետը ստացել է Խարբերդի, Ուրֆայի և Փոքր-Ասիայի ուրիշ կենտրոնների գործակալներից տեղեկութիւններ՝ այնտեղ տիրող թշուառութեան մասին: Մարդիից ստացված նամակի մէջ ասված է հետեւեալը. «Ահա տաներիս օր է, որ նպաստներ տալը ընդհատված է կառավարութեան կարգադրութեամբ: Սոսկալի է քաղցած մարդկանց մերժել կերակուր տալը: Եթէ այսպէս չարունակվի, սովից մեռնողների թիւը աւելի կը լինի, քան սպանվածների: Հայերը չեն համարձակվում գաւառի ներսը գընալ, առանց բարեկամ թիւրք ուղեկիցների: Տիրող վիճակը դեռ տարաժ է: Քաղաքի շրջակայքը մօտ 50 մղոն ներկայացնում է աւերակների մի աշխարհ: Ցները մի քանի տեղ բոլորովին հիմնայատակ են արված. դռները, փեղկերը և ուրիշ առարկաներ հանված և տարված են, խորտակած ծածկերը չեն կարող ոչ մի ապահովութիւն ընծայել բնակիչներին: Ցոյսի ոչ մի ճառագայթ չէ երեւում ոչ մի տեղից: Ամէն ամիս սպասում ենք, բայց բարւոքում չը կայ:»

—

Բէյտերի գործակալութիւնը հեռագրում է Կ. Պոլսից, մայիսի 9-ից, որ արտաքին գործերի մինիստրութիւնը դեռ չէ պատասխանել բրիտանական առևտրական վարչութեան հարցին՝ թէ ինչու են արգելվում անգլիական լրագիրները, երբ եւրօպական ուրիշ հրատարակութիւններ, որոնց մէջ տպված են նոյնատեսակ բովանդակութեան յօդուածներ, ազատ մուտք ունեն Թիւրքիա: «Times» լրագրի մուտքը միշտ արգելված է այն պատճառով, որ նրա էջերում արտատպված են եղել մանրամասնաբար «երիտասարդ Թիւրքիայի» հրատարակութիւններից զանազան յօդուածներ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, մայիսի 4-ին

Ճիշտ տարի մը առաջ, Համբարձման տօնին, Հիւանդանոցի պարտէզին մէջ պոռթկացած էր ժողովրդային ոգեորութիւնը, զոր նկարագրեցինք այն ատեն «Մշակի» էջերուն մէջ: Սասունի ջարդերը հաղիւ թէ մոռցուեր էին. երեք պետութեանց դեսպանները վերջակէտ դրած իրենց տեղեկագիրներուն՝ զրկած էին դեսպաններուն. բարեկարգութեանց նշանաւոր Ծրագիրը խմբագրուած էր. Հայաստանցի ժողովուրդը քաղցր յոյսերով լեցուած, ոգեորուած, կը պատրաստուէր իր հայրենի երդիքը վերադառնալ, վայելելու համար երկար ժամանակներէ ի վեր երազուած հանգստութիւնը, զոր նուիրագործեր էին Սասունի առաջին նահատակները իրենց արիւնով:

Այս տարուան Համբարձումը հակապատկերը եղաւ անցեալին: Օդն ալ շատ տխուր էր. հակառակ գարնանային զուարթ եղանակին, ցուրտ հով մը կը սառեցնէր զէմքերը. արեւը ծածկուած էր թանձր ամպերու ետին: Ոստիկանութիւնը կանխահոգութիւն ունեցած էր հաւատարմութեամբ գործադրել նոր եղանակ մը, որ Խրդայի—Շերիֆին օրը յղացուեցաւ՝ ժողովրդային ցոյցերը անկարելութեան դատապարտելու համար. բոլոր թաղերէն աչքի զարնող հայ երիտասարդները խումբ-խումբ ձերբակալուելով բանտարկուած էին երեք օրուան համար, որպէս զի անցած տարուան պէս նոր ցոյց մը չընեն:

Սակայն հայերը կրնային ուրախութեան ցոյց ընել, երգերով ու թափօրներով զուարճանալ, երբ զարհուրելի դէպքերուն յիշատակը դեռ այնքան թարմ է իրենց սրտերուն մէջ: Հետեւաբար, հինգշաբթի օր շատ ցանցառ բազմութիւն մը կար Հիւանդանոցին շուրջը, ուր 200-էն աւելի լրտես և ոստիկան փութացեր էին արդէն գրաւել պատուոյ տեղերը: Պատարագիչը պատրիարքական փոխանորդն էր: Օրը առանց միջադէպի անցաւ:

Այդ տխուր օրը սակայն ունեցաւ իր ամենամեծ մխիթարութիւնը: Անգլիական դեսպան Սըր Ֆիլիբ Քըրրի Համբարձման հինգշաբթի օրը պատրիարքարան գալով՝ մէկ ժամու չափ տեսակցեցաւ Իզմիրլեան պատրիարքին հետ: Լռիկ մնջիկ տեղի ունեցած այս այցելութիւնը կատարեալ անակնկալ մըն էր հայոց համար: Անցեալ տարուան Կարսէն Բարթիի հրաւէրէն ի վեր անգլիական դեսպանը առաջին անգամն էր, որ տեսնել կուգար Իզմիրլեան պատրիարքը: Ինչ նիւթի վրա խօսեցան դեսպանն ու պատրիարքը,—այժմէն կարելի չէ բան մը դուշակել, որովհետև Իզմիրլեան գաղտնի կը պահէ:

Սըր Ֆիլիբ Քըրրի չորեքշաբթի օր Ելոզդի պալատը երթալով տեսակցութիւն մը ունեցած էր սուլթանին հետ: Հինգշաբթի օր Իզմիրլեանի հետ տեսակցելէն ետք ուղղակի Դուռը գնաց տեսակցելու արտաքին գործերու նախարարին հետ, ընկերակցութեամբ դեսպանատան խորհրդական ս. Հէրպերթի, որ չորեքշաբթի օրը հասած էր Լօնդոնէն:

Կը կարծուի թէ հայկական հարցը նոր և յաջող կերպարանք մը պիտի ստանայ: Ելոզդի կառավարութեան վախերը՝ անգլիական նորանոր գործողութիւններու մասին, այնքան հաստատութիւն գտած են, որ սուլթանը «իր ամենաբարձր իմաստութեամբը» որոշած է սիրաշահել բրիտանական կառավարութիւնը, գոհացում տալով անոր պահանջումներուն Հայաստանի մասին:

Կը յուսամ յաջորդ նամակով մը աւելի ընդարձակ տեղեկութիւններ տալ այս տեսակցութիւններուն վրա:

Պ—ի

ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍ

—

Պարիզում հրատարակվող «Revue de l'Islam» թերթի մէջ մի հետաքրքրական լուր է տպված։ Հնդկական, թիւրքական և արաբական մուսուլմանների մի խումբ որոշել է այս տարի մի կոնգրէս գումարել իսլամի այժմեան վիճակի մասին խորհրդակցելու նպատակով։ Իսլամի մէջ վերջին տարիներս երևում են շատ հերձուածներ, միւս կողմից գործում են քրիստոնեայ միսիոնարները. շատ տեղերում մուսուլման մատաղ սերնդի կրթութիւնը գտնվում է քրիստոնեաների ձեռքում։ Իսլամ վարդապետութեան առաջվայ գիտական օջախները, որոնք ծաղկում էին Կորդովայում, Սամարկանդում, Բաղդադում և Դամասկոսում, այժմ էլ չը կան։ Այդ բոլոր պատճառները դրդում են իսլամի փառքին և զօրութեան նախանձախնդիրներին մի կոնգրէս գումարել, որի նպատակը պէտք է լինի— ձեռք բերել իսլամի համար կուլտուրական աշխարհում արժանաւոր տեղ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՄՈՍԿՎԱ, 7 մայիսի։ Խոդինեան դաշտի վրա այսօր նշանակված զօրահանդէսը վերացված է է աւստրիական էրցհերցոգ Կարլ-Լիւդվիգի մահվան պատճառով։

ՎԱՐՇԱՎԱ, 8 մայիսի։ Մայիսի 7-ին եկան Ֆրանսիայի ներկայացուցիչները՝ գեներալ Բուադէֆրի գլխաւորութեամբ։

ԱՎԻՆԻՕՆ, 8 մայիսի։ Այստեղի քաղաքային խորհուրդը վճռեց ուղերձ ուղարկել Թագաւոր Կայսրին թագադրութեան առիթով։

ԲԵՐԼԻՆ, 8 մայիսի։ Մայիսի 6-ին, երեկոյեան, իտալական թագաժառանգ պրինցը առանձին գնացքով ճանապարհ ընկաւ Վարշավա։

ՄԱՅԻՍԻ 14-ին (26), Նոցա Մեծութիւնների սրբազան թագադրութեան օրը, այստեղի բօրսան կը փակվի։

ՎԻԵՆՆԱ, 8 մայիսի։ Արած կարգադրութիւնների համաձայն, էրցհերցոգ Եվգենի ճանապարհ է ընկնում Մոսկվա։

ՄԱՍՍՕՎԱ, 8 մայիսի։ Իտալական զօրքի 1129 զինուորներ նաւեր նստեցին՝ հայրենիք վերադառնալու համար։

ՄՈՍԿՎԱ, 8 մայիսի։ Այսօր, մօտ 4 ժամին, հասան յունական թագաժառանգ Կոնստանտին և բոլգարական Ֆերդինանդ իշխանը։ Դիմաւորեցին Կայսերական ընտանիքի անդամները։ Բոլգարական իշխանին դիմաւորելու համար հաւաքվեց բոլգարական կոլոնիան։

Այսօր, առաւօտեան 9 ժամին, հասաւ Սիամեան Շիրա պրինցը։ Դիմաւորեցին Կայսերական ընտանիքի անդամները, Կայսրի սվիտայի անդամները և Մոսկվայի ադմինիստրացիան։

Աւստրիական էրցհերցոգի մահվան պատճառով, իշխան Լօբանով-Ռոստովսկի Թագաւոր Կայսրի և ռուսաց կառավարութեան անունից գրաւոր կերպով ցաւակցութիւն յայտնեց աւստրիական դեսպանին։ Դեսպանին այցելեցին նոյնպէս բոլոր Մեծ Իշխանները, դիպլոմատիական մարմնի բոլոր անդամները և Թագաւորի սվիտայի անձինք։

Մայիսի 7-ին պրուսական գրագունեան երկրորդ գնդի պատգամաւորութիւնը ներկայացաւ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեոդորովնային։

Այսօր, 4 ժամին, ժամանեցին սաքսոնեան դուքսը և չէրնոգորեան իշխանը թագաժառանգի և Մարկո պրինցի հետ։

Այսօր, $4^1/_2$ ժամին, ժամանեց արտասահմանից Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնա Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի հետ։ Նորին Մեծութեանը դիմաւորեցին՝ Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեոդորովնա, Դանիայի թագաժառանգը, Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնա և Մեծ Իշխանները։ Երբ երեաց կառքը Նոցա Մեծութիւններով, ժողովուրդը ոգևորված կերպով ողջունեց Միապետին և Կայսրուհիներին։

Այսօր ժամանեցին Մեծ Իշխանուհի Անաստասիա Միխայլովնա Մեկլենբուրգ-Շվերինեան դքսուհին, Մեկլենբուրգ-Շվերինեան մեծ դքսի ներկայացուցիչ գեներալ Մալցան և կօրէյական արտակարգ դեսպանութիւնը չորս անձերից բաղկացած։ Հանդիսաւոր կերպով դիմաւորեցին Ֆրանսիական արտակարգ դեսպանութեանը, որի գլխաւորն է գեներալ Բուադէֆր։ Դեսպանութեան գլխաւորին դիմաւորեց Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ։ Վագոնից դեսպանութեան դուրս գալու ժամանակ երաժշտութիւնը, «Մարսելիեզ» էր ածում։

Այսօր Նոցա Մեծութիւնների մօտ էին Պետրովսկի դահլիճում՝ Հէսսէնի մեծ դուքսը, բուլգարական թագաժառանգ պրինցը, Կոնստանտեան դուքսը, Կոբուրգ-Գոթեան դուքսը իրանց ամուսիններով, Գոթայի Ալբերտ թագաժառանգ պրինցը պրինցուհի Բէատրիսայի հետ, Օլդենբուրգեան թագաժառանգ պրինցը և եպիսկոպական Սաքսոնիայի Ֆուշինիէ պրինցը։

ՄՈՍԿՎԱ, 9 մայիսի։ Մայիսի 8-ին, երեկոյեան 10 ժամին, Պետրովսկի պալատի բակում տեղի ունեցաւ սերենադա, հետևեալ պրոգրամայով. արևշատութեան խօր «Ռուսալկայից», Գունոյի «Գիշերը», Լեռնովի «Գեսակի ափին», «Պանորամա», Զայկովսկու «Քնած գեղեցկուհի» բալէտից, Մենդելսօնի «Անտառը», և «Славься»։ Երգիչները ձեռքերում բռնած ունէին երկար ձողեր գունդգոյն լապտերներով։ Երբ Նոցա Մեծութիւնները Բարձրագոյն անձինքների հետ դուրս եկան պատշգամբը, սկսվեց սերենադան։ Մասնակցում էին խօրեր՝ ռուսաց խօրային ընկերութեան և Մոսկվայի կոնսերվատորիայի, Մոսկվայի կայսերական թատրոնի, Լիդերտանէլ, ֆիլարմոնիական ընկերութեան։ Բոլոր մասնակցողներն էին՝ 1200 հոգի։ Երաժշտական իւրաքանչիւր կտորից յետոյ Թագաւոր Կայսրը ծափահարում էր։ Պատասխանն էր պալատի մօտ կանգնած խօրի և ժողովրդի ահագին «ուրան»։ Սերենադայի վերջը, Թագուհի Կայսրուհին շնորհակալութիւն յայտնեց կատարողներին, որոնք պատասխանեցին բարձրաձայն «ուրայով»։

Թագաւոր Կայսրը, ֆինանսների մինիստրի ամենահպատակ զեկուցման համեմատ, թէ Մոսկվայի Օգոստափառ գեներալ-նահանգապետը դիտաւորութիւն ունի կառուցանել հանրակացարան համալսարանի ուսանողների համար, Բարձրագոյն հրամայեց հանրակացարանի կառուցման համար գանձարանից տալ 300,000 բուբլի, որպէս սկիզբ։

Նոցա Մեծութիւնների հանդիսաւոր մուտքը դէպի Կրէմլեան պալատը կայացաւ ժողովրդի անհամար բազմութեան մէջ, և արև օրը թագաւորական ճանապարհը, որ չքեղ կերպով զարդարված էր, հիանալի պատկեր էր ներկայացնում։ Տները ծածկված էին դրօշակներով, կանաչով, վահաններով, Նոցա Մեծութիւնների անունների սկզբնատառերով և ուրիշ զարդարանքներով։ Ճանապարհի վրա չինված արիքունները լցված էին հանդիսաւոր հասարակութեամբ։ Առաւօտեան մօտ 10 ժամին փողոցների վրա արդէն ազատ անցուդարձ անել անկարելի էր. ամեն ուղղութեամբ հաւաքվում էր ժողովուրդը՝ հանդիսելու Արքայական կօրտէժին։ Հանդիսաւոր ընթացքը չարժվեց ճիշդ $2^1/_2$ ժամին։ Մայրաքաղաքը մուտ գործելու ժամանակ Թագաւորին դիմաւորեց Օգոստափառ գեներալ-նահանգապետը, որը միացաւ հանդիսաւոր ընթացքին՝ իր ադիւտանտներով՝ Ցաղթական դռների մօտ։ Զէմլեանոյ-գորոդ անուանված փողոցը մուտք գործելու ժամանակ Կայսրին դիմաւորեց քաղաքագլուխը՝ քաղաքային վարչութեան անդամների հետ։ Բէլիգորոդ մուտք գործելու ժամանակ դիմաւորեց Մոսկվայի զէմստվոն։ Տվերսկայա հրապարակի վրա դիմաւորեց Մոսկվայի ազնվականութիւնը իր ներկայացուցիչներով։ Վօսկրեսենսկի դռների մօտ դիմաւորվելով Մոսկվայի նահանգապետի, վարչական և դատաստանական հիմնարկութիւնների կողմից, Նոցա Մեծութիւնները բարեհաճեցին կանգ առնել Իվերսկայա մատուռի մօտ։ Թագաւորը իջաւ ձիուց, իսկ երկու Կայսրուհիները դուրս եկան կառքից և երկրպագեցին Իվերսկայա Աստուածամօրը։ Կրասնայա հրապարակի վրա, Մինին և Պոժարսկու արձանների գծով, կանգնած էին Մոսկվայի կօրպուսների կազէտները։ Այդտեղ էին կանգնած և վօլօսների ստարշինաները և օտարազգիների գունդգոյն խումբը փայլուն զգեստներով։ Կրէմլ հասնելուց յետոյ, Ուսպէնսկի տաճարի գաւթում Նոցա Մեծութիւններին դիմաւորեց հոգևորականութիւնը խաչով և սուրբ ջրով։ Շարականը և կանոնը երգելու ժամանակ Թագաւորը և Թագուհին մտան Ուսպէնսկի տաճարը, ուր համբուրեցին մասունքները և պատկերները։ Դրանից յետոյ Նոցա Մեծութիւնները աղօթեցին Արխանգէլսկի և Բլագովեշչենսկի տաճարներում։ Հանդիսաւոր ընթացքի ժամանակ Նոցա Մեծութիւների առջևից գնում էին պալատական պաշտօնեաները։ Մանելով Կրասնոյե-Կրիլցո, Նոցա Մեծութիւները ողջունեցին բոլորին, որոնք հաւաքվել էին Սօբօրնայա փոքրիկ հրապարակի վրա, և մտան Կրէմլի պալատը։ Ի պատասխան Նոցա Մեծութիւնների ողջոյնին լսվեց հիացած «ուրա»։ Տրիբունների վրա Իվան Վելիկի զանգակատան մօտ նստած էին՝ բուխարական էմիրը և Խիվայի խանը իրանց ժառանգներով, նոյնպէս և օտարազգիների ներկայացուցիչները։ Մնացած տրիբունները գրաւած ունէին աշակերտուհիները և միանձնուհիները։

Թագաւոր Կայսրը Սմոլենսկի գնդի համազգեստ ունէր հագած Անդրէէվեան ժապաւէնով և նստած էր սպիտակ ձիու վրա։ Սվիտան առաջին էր և փառաւոր։ Նորին Մեծութիւնը շրջապատված էր եկած օտարազգի պրինցներով։ Երկու Կայսրուհիները և բոլոր Մեծ Իշխանուհիները ռուսական սպիտակ չորեր ունէին՝ կոկոշնիկներով։ Ամբողջ ճանապարհի վրա ուրախ ժողովրդի բարձրաձայն «ուրան» խառնվում էր թնդանօթաձգութեան և զանգահարութեան ձայների հետ։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի։ Ազնվական կալուածական բանկի գրաւական թերթերի կատարված տիրաժի ժամանակ 500-ական բուբլի տարան հետևեալները։

Տոմսերի համարները — Սերիաների համարները

1: 1431, 4696, 4697, 11,459.
2: 1728, 1774.
3: 1349, 4713, 12936, 13979, 15863.
4: 3868, 4497, 9566, 9962.
5: 2868.
6: 1585, 13158.
7: 3154, 6007, 6150, 7740, 7788, 7953, 12163, 12420, 15885.
8: 1313, 1554, 7525, 10962.
9: 35510, 4820, 5292, 6303, 8672, 18259, 15732.
10: 1712, 2500, 2922, 9218.
11: 907, 5272, 14570.
12: 1005, 3407, 4431, 9954.
13: 4356, 10083:
14: 431, 9815.
15: 2053, 2711, 3174, 5190, 6262, 6941, 10431.
16: 2014, 2159, 2233, 2498, 5592, 10271, 14407.
17: 280, 1793, 2211, 2768, 3346, 3887, 6556, 11837, 13773.
18: 570, 1373, 1909, 8953.
19: 5316, 6993, 7020, 8077, 8202, 10641, 10887, 11282, 13359.
20: 1392, 2175, 8398, 10773, 13227, 13479.
21: 3408, 3989, 7162, 10942, 11067.
22: 293, 765, 2388, 3808, 4418, 5045, 5628, 13945, 14801.
23: 344, 3347, 4789, 4791, 5700, 6545, 10802.
24: 10663, 11571, 13235, 13743, 13900, 14352, 14486, 15370.
25: 2039, 2795, 3452, 4117, 5178, 5377, 14237 14366, 15913.
26: 252, 363, 700, 1686, 4348, 6425, 6498, 12912, 15042.
27: 2986, 3362, 8090, 10707, 13255, 14699, 14911.
28: 4937, 8317, 11501, 12594.
29: 679, 6238, 9936, 15391.
30: 1701, 14537, 14613.
32: 4267, 9539, 12196, 12716, 15006.
33: 2712, 2811, 3601, 3749, 6515, 8711.
34: 1513, 3122, 3534, 5583, 12433, 13641, 14559.
35: 5267, 8844, 10637.
36: 7008, 9513, 12403, 12597, 14061, 14209, 14687, 15227.
37: 4162, 5211, 7575, 9531, 14578, 14900.
38: 1297, 4744, 12860.
39: 1963, 3696, 9199, 10118, 15864,
40: 1269, 2257, 7542, 10476, 12984, 13579, 14874.
41: 5200, 5410, 11840.
42: 520, 5275, 6227, 8795, 14562.
43: 512, 1761, 1873, 2389, 3447, 4477, 11988, 14309, 15445.
44: 2967, 4392, 7310, 7737, 9258, 13277, 14706.
45: 1822, 3157, 1154, 14202.
46: 903, 5299, 8906, 9652, 11,247, 12665, 12801, 13503.
47: 109, 5245, 8285.
48: 1509, 3658, 4371, 7739, 10920, 12927, 15143.
49: 4935, 13107.
50: 18, 213.

ՏԻՐԱԺ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ՍԵՐԻԱՆԵՐԻ №№.
7080, 5386, 5601, 15597, 10067, 14834, 147, 15039, 2942, 1229, 9083, 9338, 1892, 11122, 9187, 234, 8541, 3439, 3591, 805, 6796, 15191, 4530, 9228, 29, 4323, 12097, 5141, 14675, 5397, 4857, 9023, 15153, 9774, 6523, 15997, 7562, 1419, 848, 1891, 10755, 3241, 8302, 10110, 3333, 15255, 742, 13163, 3479, 2754, 7071, 4822, 5362, 5342, 10300, 9693, 7708, 6311, 316, 9117, 3116, 5742, 7081, 9330, 4731, 6504, 2253, 11153, 3147, 14512, 1037, 12073, 5524, 3683, 9655, 3720, 14570, 3655, 10316, 15803, 12959, 761, 4417, 14448, 4231, 3687, 7299, 15527, 5780.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եկատերինոդարից Սեղրակ Զալտրեանի միջոցով ստացանք բարեկրօն Գէորգ քահանայ Զաքարեանի կողմից՝ Շափչուկայ գիւղի գպրոցին նուիրված գրքերը։ Յայտնում ենք նուիրատուին մեր խորին շնորհակալութիւնը։

1—1 Երէցփոխ Յարութիւն Բումբանց

ԲԵԹՂԵՀԵՄԻ Ս. Աստուածածնի եկեղեցու ԵՐԷՑՓՈԽԻ ընտրութիւնը երկրորդ անգամ նշանակված է ամսիս 12-ին, կիրակի, ժամի 10-ին ս. պատարագից յետոյ։ Հրաւիրում եմ ծխականներին ներկայ լինել այս ընտրութեան։

Գ. աւագ քահանայ տէր-Բարսեղեանց.
(№ 53) 1—1

ԼՈՒՄԱՅ

ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ

ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ

Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Эрі ѣю Нізарѣянцу. ԹԻՖԼԻՍՈՒՄ վաճառվում է նաև Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։ ԲԱԳՈՒ ծախվում է Շիրազեանցի գրախանութում։

(№ 64) 5—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(կուկիա, վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխ. հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԴՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՕ քիմական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խելի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Կանոն
Գլուխ
Գանձ
Գանձ
Գանձ

ԳԱՆՁԱԿԻ Հայոց հոգևոր կառավարութեան Ատենում նշանակված է ԱՃՐԴԱԽՕՍՈՒԹԻՒՆ ներկայ մայիս ամսի 31-ին, մինչև յերիս աւուրս կրկնաճրդախօսութեան, կապալով տալու համար եռամեայ ժամանակով Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցւոց պատկանեալ ՆՈՐԱԿԱՌՈՑՑ ԲԱՂՆԻՍՆ։

Յանկացողներն մասնակցելու այս ճրդախօսութեան կարող են կարդալ դաշնադրի նախագիծը (Кондиція) Գանձակի Հայոց հոգևոր կառավարութեան Դիւանատանն, ամեն օր առաւօտեան ժամը 9-ից սկսեալ մինչև 2-րդ ժամն զկնի կէս աւուր, բացի կիրակի և տօն օրերից։

Սակարկութիւնն սկսվելու է 3050 ռուբ. դրամից։ Ճրդախօսութեան մասնողներն պէտք է ներկայացնեն գրաւական տարվայ կապալագրամի մի երրորդականը։

Անդամ կառավարութեան՝ Յուսիկ քահանայ Վերդեանց

(№ 53) 1—1

ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ է 23,000,000 ռուբլի։
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, „ՌՕՍՍԻԱ“ ընկերութիւնը առաջարկում է ՕԺԻՏԻ (բաժինք) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ։

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ՌՈՒԲԼԻ ՕԺԻՏ, այնպէս որ, 18 ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը „Ռօսսիա“ ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 ռուբլի։

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձվին բոլոր իր վճարած տուրքերը (պրէմիաները,) եթէ միայն ապահովագրված երեխան վախճանվի պայմանաւորեալ ժամանակից առաջ։

1895 թուի յունվարի 1-ին „ՌՕՍՍԻԱ“ ընկերութեան մէջ ապահովագրված էին 31,701 անձինք 83,708,760 ռուբլի դրամագլխով։

Տղայ երեխաների համար եւս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կը ստացվի իբրև թոշակ (պենսիա) ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնվում է՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

(№ 71) (շ.) 22—52

ԿԱԿԱՕ ԲԼՕԿԼԻՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ, արկղիկներում, 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամ։ (GRAND PRIX) Բարձրագոյն պարգև։ Անտվերպէնի 1894 թուի համաշխարհային ցուցահանդիսում։

Գլխաւոր պահեստը՝ դեղարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված Կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում։ (№ 6) (Ե) 18—50

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը

	Գինը
1) ԻՎԷԼԻՆԱ, Գրիգոր Արծրունու	50 կոպ
2) ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու	20 „
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի.	50 „
4) ՍԱՍՈՒՆ, Ա. Քալանթարի.	20 „



ԲԷՐՏԱ-ՐԻՍ

Քիմիա-կոսմետիկական լաբորատորիա ԲԻՍ-ԳՈՒՏՄԱՆ

ԿՕՍՄԷՏԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

„ԲԷՐՏԱ-ՐԻՍ“

Գնորդները դարձեալ ստանում են մի գրքույկ՝ անվճար

ԷՕԺԷՆԻԱՑԻ ՊԱՍՏԱ

երեսի մորթը կակղեցնելու համար պօմադ. ոչնչացնում է շուտով երեսի վրա եղած կարմիր բիծերը և մուները. այս միջոցը առաջ է բերում նաև երեսի թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը 1 ր. 60 կ.

Elixir Mélange

Մազերը աճեցնելու և գլխի թեփը ոչնչացնելու հեղուկ։ Գինը 2 ր.

ԷՕԺԷՆԻ ՊՈՒԴՐԱ

սպիտակ, վարդագոյն և Բաչել (թուխ դէմք ունեցողների համար) նա ամուր կերպով պահպանվում է մորթու վրա և բոլորովին աննկատելի է աչքի համար, մորթուն տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն։ Գինը և 1 ր. 20 կ. 1 ր. 50 կ.

ԷՕԺԷՆԻ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ

հեղուկ վիճակի մէջ այտերին և ականջներին տալիս է բոլորովին բնական, վարդագոյն գոյն որ ոչ ցերեկվայ, ոչ ելէքտրական լոյսից չէ փչանում։ Գինը 1 ր. 50 կ.

ՄԻՐՏԱՑԻՆ ԲԱԼԶԱՄ

(պոմադա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքոյշ կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն։ Նա ոչնչացնում է արևհարքը, մուները և մորթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և տգեղութիւն։ Գինը 1 ր. 75 կ.

ՔԻՆԱ-ԳԼԻՑԷՐԻՆԱՑԻՆ

գլխի պօմադ Պերուանական բալզամով եփած՝ մազերը պնդացնելու, խատցնելու և աճեցնելու համար։ Գինը 2 ր.

ԽԽՈՒՆՁԱՑԻՆ ՊՕՄԱԴ

նրա գործածութիւնից յետոյ ձեռները ստանում են զարմանալի սպիտակութիւն և ճկունութիւն։ Գինը 1 ր. 30 կ.

ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԷՍՍԷՆՑԻԱ

բեղերի համար (Բիս-Գուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձևը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման։ Գինը 75 կ.

ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

(Բիս-Գուտման), սև, շագանակագոյն և խարտեաշ։ Այդ ներկով ներկված մազերը պահպանում են իրանց գոյնը 6 շաբաթվայ ընթացքում։ Գինը 3 ր.

Ծախվում է բոլոր դեղարարական և կոսմէտիական խանութներում։ Գլխաւոր պահեստը՝ Բարձրագոյն հաստատված՝ դեղարարական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բագու։ (№ 26) 9—50

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ

31-ն Ապրիլի 1896

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բաժիններում	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ).....	263,416—37	261,788—95	525,205—32
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	537,704—50	1,081,100 —	1,618,804—50
3. Զեղչ. (Disconto) մուրհ. երկու ստորագրութ.	2,911,063—77	1,250,023—31	4,161,087—08
4. Զեղչ. մուրհ. մի ստոր. ապահ. տոկոս. թղթ.	373,870 —	— —	373,870 —
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	54,198—61	5,761—25	59,959—86
6. Փոխատուութիւն գրաւականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,482,849—12	583,508—10	2,066,357—22
բ) » ոչ ապահ. » »	325,516 —	13,650 —	339,166 —
գ) Ապրանքների	— —	945,856—55	945,856—55
դ) Ոսկու և արծաթի.....	— —	6,965—91	6,965—91
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	1,681,255—82	174,358—27	1,855,614—09
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր..	242,451—18	103,356—75	345,807—93
9. Տոկոսաբեր թղթեր պահեստի դրամագլխի...	— —	— —	— —
10. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro).....	3,848,452—96	— —	3,848,452—96
բ) Բանկի հաշիւը (Nostro).....	8,775,174—27	— —	8,775,174—27
11. Բաժինների հաշիւը կենտր. վարչ. հետ...	1,126,993—14	— —	1,126,993—14
Կենտրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	— —	1,139,073—77	1,139,073—77
12. Գնումն և վաճառ. արժեթղթ ըստ յանձնար.	144,500 —	— —	144,500 —
13. Պայմանաժամն անցուցած փոխատուութիւն.	32,906 —	14,905 —	47,811 —
14. Բողոքված մուրհակներ.....	5,700 —	— —	5,700 —
15. Ընթացիկ ծախսեր.....	21,944 87	18,582—94	40,527—81
16. Կահկարասիք և սկզբնական ծախսեր....	2,923—10	6,520—83	9,443—93
17. Յետ ստացուելիք ծախսեր.....	9,703—22	13,383—99	23,087—21
18. Անշարժ կալուածք.....	— —	50,777—82	50,777—82
Ր. Ա.	21,840,622—93	5,669,613—44	27,510,236—37

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բաժիններում	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ (5000 բաժնետոմսեր, 200 ռուբլ)	1,000,000		
2. Առաջին վճար բաժնետոմսերի 3-րդ չրջ.	500,000	— —	1,529,600 —
3. Երկրորդ » » » »	29,600		
4. Պահեստի դրամագլուխ.....	655,407—89	— —	655,407—89
5. Դրամագլուխ չիջուց. անշարժ կալուածքի.	— —	2,499—33	2,499—33
6. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով.....	4,708,038—22	1,860,900 —	6,568,938—22
բ) ց'Պահանջ.....	387,139 —	181,132 —	468,271 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ.....	1,060,489—50	2,146,099—03	3,206,588—53
դ) » » պայմանաւոր....	— —	103,162—57	103,162—57
7. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro).....	3,945,666—46	— —	3,945,666—46
բ) Բանկի հաշիւը (Nostro).....	7,986,491—76	— —	7,986,491—76
8. Բաժինների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	— —	1,140,367—08	1,140,367—08
Կենտրոն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.	1,216,942—77	— —	1,216,942—77
9. Բանկի բաժնետոմսերի անվճար կտրօնների բաշխիւ.....	3,589—46	— —	3,589—46
10. Չը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց	110,655—31	49,666—11	160,321—42
11. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	91,482—29	46,726—99	138,209—28
12. Փոխանցիկ գումարներ.....	89,019—63	71,362—85	160,382—48
13. Արդիւնք 1895 թ.	156,100—64	67,697—48	223,798—12
Ր. Ա.	21,840,622—93	5,669,613—44	27,510,236—37

Дозволено цензурою, Тифлисъ, 9 Мая 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.